20 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2012 ՇԱԲԱԹ 185(5037)

Ազգ
Azg

ISSN: 1829-1651

# «Այնքան ուժեղ ենք, որ կարող ենք թունավորել նախագահին հենց տիկնոջ միջոցով»

Այդ մասին, ըստ «Էրգենեքոնի» դատավարության անանուն վկայի, հայտարարել է պաշտոնաթող գեներալ Լեւենթ Էրսոզը: Խոսքը 1993-ի ապրիլին մահացած նախագահ Թուրգութ Օզալին եւ նրա տիկնոջ՝ Սեմրային է վերաբերում: Եթե վկան հավաստի է, ապա Սեմրա Օզալն իր ամուսնու սպանությանը պետք է մասնակցած լինի ակամա, քանի որ ինքն էր առաջ քաշել Օզալի թունավորման վարկածը Թուրքիայում:

Ինչ վերաբերում է պաշտոնաթող գեներալ Էրսոզին, ապա նա կալանված է «Էրգենեքոնի» գործով, որի առնչությամբ նշված վկան, հավանաբար նույնպես զինծառայող, դատարանում ասել է. «2005 թիվն էր, մենք Անկարայում Ումիտքոյ թաղի գնդապետների հանրակացարաններում էինք: Այնտեղ էինք գնացել փոխգնդապետ Սավաշի եւ կապիտան Իրֆանի հետ, որտեղ էին նաեւ գեներալի մի քանի ենթակաները: Գեներալ Էրսոզը, դիմելով ներկաներին, ասաց. «Մեր դեմ ձեռնարկված ամեն մի քայլ պատասխան կստանա, նույնիսկ նախագահի պաշտոնն զբաղեցրած պետական գործչի կինը: Մենք շատ ուժեղ ենք: Հարկ եղած դեպքում կարող ենք թունավորել երկրի նախագահին հենց տիկնոջ միջոցով»»:

Հ. Չ.

# Կաթսայում եռացողը դատարկ ջուր է

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ



«Սիվիլիթասի» շուրջը կրքերը այս ողջ շաբաթ էլ չհանդարտվեցին: Երեկ հիմնադրամի աշխատակիցները երթ էին արել դեպի դատախազություն՝ դատախազությանը փոխանցելով 13 հազար ստորագրությամբ պահանջագիր-նամակ՝ Վարդան Օսկանյանի նկատմամբ ճնշումները դադարեցնելու պահանջով: Այսինքն՝ Օսկանյանի թեման ողջ շաբաթ տաք էր, ու տաք էր պահում հենց ինքը՝ Օսկանյանը՝ ժամանակ առ ժամանակ գրառում անելով վիրտուալ տարածքում, ու հետաքրքրական է, որ այդ գրառումները, օբյեկտիվ թե միջնորդավորված պատճառներով, աննկատ չեն մնում ոչ քաղաքական ընդդիմախոսների, ոչ համակիրների աչքից:

Անցած շաբաթ վառ էր նաեւ Քոքոբելյան-Հովհաննիսյան թեման, ու այս երկու գործիչների միջեւ պատը, երկար իջնել-բարձրանալուց հետո, ի վերջո դարձավ անանցանելի ու այնպիսին դարձրեց երկպառակությունը, որ շաբաթվա վերջին արդեն լուրեր կային հոկտեմբերի 21-ին տեղի ունենալիք «Ժառանգություն» կուսակցության ընդլայնված նիստին (որը պետք է գլխավորի Րաֆֆի Հովհաննիսյանը) կարող է խոսք գնալ ազատդեմոկրատական Խաչատուր Քոքոբելյանին «Ժառանգություն» խմբակցությունից հեռացնելու մասին: Եթե այդպիսի բան տեղի ունենա՝ «Ժառանգություն» խմբակցությունում միայն Ալեքսանդր Արզումանյանը կներկայացնի «Ազատ դեմոկրատներ» կուսակցությունը, իսկ Քոքոբելյանը եթե համառի ու մնա...առանձին պատգամավոր, չգիտեմ, դեռ պետք կլինի նայել Ազգային ժողովի կանոնակարգ-օրենքը, հասկանալու համար ո՞ւմ է ներկայացնելու: Անհասկանալի կլինի նաեւ, թե ինչ է անելու այս դեպքում միակ ազատդեմոկրատականը «Ժառանգություն» խմբակցությունում: Եթե, իհարկե, հոկտեմբերի 21-ին այդպիսի բան՝ Քոքոբելյանի հեռացումը խմբակցությունից, տեղի ունենա:

Տես էջ 2

# Ինքնաթիռի իջեցման համար Ռուսաստանը գուցե վրեժ չլուծի Թուրքիայից

## *Բայց որ Ահմեդ Դավութօղլուն խուճապի է մատնվել՝ ակնհայտ է*

ՀԱԿՈԲ ՉԱՔՐՅԱՆ

Հոկտեմբերի 10-ին, երբ թուրքական օդուժի հարկադրանքով Անկարայում վայրէջք կատարեց Մոսկվա-Դամասկոս չվերթի սիրիական մարդատար ինքնաթիռը, վարչապետ Ռեջեփ Թայիփ Էրդողանը ի լուր աշխարհի հայտարարեց, թե ինքնաթիռում զենք ու զինամթերք են հայտնաբերել: Ռուսաստանի արտգործնախարարությունն իսկույն արձագանքեց. «Մենք Սիրիայի հետ համաձայնագիր ունենք կնքած: Պաշտոնապես տրամադրում ենք այն զենքը, ինչ պահանջվում է»: Ռուսական կողմը միաժամանակ ընդգծեց, որ ինքնաթիռում եղել են ռադարային համակարգի առանձին մասեր՝ անհրաժեշտ բոլոր փաստաթղթերով: Այսինքն՝ քողարկված որեւէ զենք չկա:

Թվում էր, թե Թուրքիան սիրիական ինքնաթիռում հայտնաբերված «զենք ու զինամթերքը» աշխարհին կցուցադրի, դրանով էլ կկանխի բանավեճերի ծավալումը: Սակայն դա չարվեց: Փոխարենը ստուգելու համար Էրզրումի օդանավակայան իջեցվեց Երեւանից Հալեպ մարդասիրական բեռներ տեղափոխող հայկական ինքնաթիռը: Սա, ըստ երեւույթին, սիրիական ինքնաթիռի շուրջը Մոսկվայի հետ Անկարայի ծավալած բանավեճի յուրատեսակ արձագանքն էր, այն առումով, որ Հայաստանը Ռուսաստանի ռազմաքաղաքական դաշնակիցն է Հարավային Կովկասում:

Այդ ընթացքում արտգործնախարար Ահմեդ Դավութօղլուն սիրիական ինքնաթիռում հայտնաբերվածի առնչությամբ շրջանառությունից հանեց «զենք ու զինամթերք» բառերն ու սկսեց դրանք փոխարինել «ռազմական հումք» բառերով: Ի դեպ, «Հյուրիեթի» հոկտեմբերի 15-ի համարում հրապարակված հոդվածում «Սակարյա» համալսարանի էլեկտրոնիկայի եւ ճարտարագիտության ֆակուլտետի հակաօդային պաշտպանության համակարգերի մասնագետ, դոկտ. Դեմիրքոլն արդեն գրել էր, որ սիրիական ինքնաթիռում հայտնաբերված մասերը չի կարելի բնութագրել որպես քողարկված զենք:

Այլ կերպ, որքան էլ Անկարայի «Էսենբողա» օդանավակայանում իջեցված ինքնաթիռը սիրիական լիներ, օդ էր բարձրացել Մոսկվայից, իսկ ինքնաթիռում հայտնաբերված «զենք ու զինամթերքը» ռուսական էին, հետեւաբար Թուրքիան, առանց հաշվի առնելու մեծ տերության հանգամանքը, մեղադրում էր Ռուսաստանին:

Տես էջ 3

# Հնդիկ ռեժիսորին հետաքրքրում է Հայոց ցեղասպանության թեման

Հնդիկ ճանաչված դերասան եւ ֆիլմի ռեժիսոր Շեքհար Կապուրը Երեւանում ուսումնասիրելու է Հայոց ցեղասպանության պատմությունը՝ հետագայում այդ թեմայով ֆիլմ նկարահանելու նպատակով, իրազեկում է Գերմանիայում առցանց «Հայփրեսս» լրատուն՝ հենվելով Կապուրի՝ twitter-ի էջում արած գրառման վրա: Շեքհար Կապուրը Մումբայում ամենահաջողակ ռեժիսորներից է, նրա ֆիլմերը բազմիցս են արժանացել միջազգային գնահատականի, իսկ ինքը 2010-ին Կաննի 63-րդ փառատոնի ժյուրիի կազմում էր:

Ան. Հ., Գերմանիա

# Պայթեցվել է Իրան-Թուրքիա գազամուղը

Երեկ առավոտյան հայտնի դարձավ, որ գիշերը պայթեցվել է իրանական գազը Թուրքիա հասցնող գազամուղի արեւելյան հատվածը: Ռոյթեր գործակալության տվյալներով, պայթյունի հետեւանքով վիրավորվել է 28 թուրք զինծառայող:

Պայթյունը տեղի է ունեցել Աղրի-Էրզրում հատվածում, Ալաշկերտ ավանից ոչ հեռու (Աղրիի նահանգ): Թե երբ կվերականգնվի գազամատակարարումը, հայտնի չէ:

Թուրքական «Հյուրիեթ» թերթը պնդում է, թե գազամուղը պայթեցրել են PKK-ի քուրդ գրոհայինները: Պայթյունից հետո մինչեւ 10 կմ հեռավորությունից երկար ժամանակ տեսանելի էր տասնյակ մետրերի հասնող բոցերի սյունը:

«Գրոհայինների չեզոքացման» նպատակով Ալաշկերտի շրջան են ուղարկվել բանակի եւ ոստիկանության հավելյալ ուժեր:

Տեղական իշխանությունների տվյալներով, գազամուղը պայթեցվել է այն պահին, երբ դրա կողքով անցել է զինծառայողների բեռնատար ավտոմեքենան: Սրանով է բացատրվում վիրավորների մեծ թիվը. շատերը ստացել են այրվածքներ:

Միաժամանակ թուրքական լրատվամիջոցները հաղորդում են, որ երկրի հարավարեւելքում շարունակվում են բանակի եւ PKK-ի մարտիկների բախումները: Միայն Հաքքարիի նահանգում հինգշաբթի օրը սպանվել են 15 գրոհային եւ 3 զինծառայող:

# Հուժկու պայթյուն Բեյրութի քրիստոնեական մասում

Երեկ կեսօրից հետո ժամը 3-ի սահմաններում Լիբանանի մայրաքաղաք Բեյրութի քրիստոնեական Աշրաֆիյե թաղամասում, Սասին հրապարակի մոտ, որոտաց ուժգին պայթյուն խիտ բնակեցված փողոցներից մեկում: Շուտով պարզվեց, որ պայթուցիկներով լիքը ավտոմեքենա է պայթել, որի հետեւանքով զոհվել է 8 մարդ, իսկ 76-ը՝ վիրավորվել: Մեծ վնաս է հասցվել շրջակայքում գտնվող շենքերին, կայանված բազմաթիվ ավտոմեքենաներին ու խանութներին:

Քիչ ավելի ուշ պարզվեց, որ սպանվածների մեջ է եւ հավանաբար հենց նրա դեմ է եղել պայթեցումը՝ Լիբանանի ազգային անվտանգության ծառայության բրիգադի գեներալ Ուիսսամ ալ Հասանը, որը, ըստ նախնական տեղեկությունների, զբաղվում էր Սիրիայի հարցերով:

2008 թ.-ից ի վեր Լիբանանում սա առաջին ահաբեկչական պայթյունն էր: Ոմանք այն համարում են հարեւան Սիրիայում տիրող վիճակի անմիջական հետեւանք: Հիշեցնենք, որ Լիբանանում առկա է ներքին հակամարտություն սիրիամետ եւ հակառակ հոսանքների միջեւ:

# Երուսաղեմի հայոց պատրիարքի հոգեհանգստյան արարողությունը՝ հոկտեմբերի 21-ին, թաղումը՝ հաջորդ օրը

## *Տեղապահ ընտրվեց Արիս արք. Շիրվանյանը*



Երուսաղեմի հայոց պատրիարք, Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի հոգեհանգստյան արարողությունը կկայանա այս կիրակի. այդ օրը նրա մարմինը կբերվի Յաֆայի դուռ: «**Ազգ**» օրաթերթի հետ հեռախոսազրույցում Սրբոց Հակոբյանց միաբանության անդամ Կորյուն վարդապետ Բաղդասարյանը, ներկայացնելով հոգեհանգստյան արարողության ընթացակարգը, ասաց, որ այնուհետեւ դագաղը կտեղադրվի Սրբոց Հակոբյանց տաճարում, որտեղ էլ միաբանության անդամներն ու հավատացյալները հնարավորություն կունենան վերջին հրաժեշտը տալու պատրիարքին:

Հոկտեմբերի 22-ին Սրբոց Հակոբյանց տաճարում կմատուցվի սուրբ պատարագ եւ կկատարվի պատրիարքի վերջին օծման արարողությունը: Նույն օրն էլ Սուրբ Փրկիչ հայկական եկեղեցու գերեզմանատանը կամփոփվի պատրիարքի մարմինը: Հոգեհանգստյան եւ հուղարկավորության արարողություններին կմասնակցեն Մայր աթոռ Սուրբ Էջմիածնի, Մեծի տան Կիլիկիո կաթողիկոսության, Պոլսո հայոց պատրիարքարանի, ԱՄՆ-ի, Կանադայի եւ եվրոպական այլ թեմերի պատվիրակություններ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի մամլո դիվանից **Վահրամ քահանա Մելիքյանն** ասաց, որ Մայր աթոռից հուղարկավորությանը կմասնակցեն Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ արք. Կճոյանն ու Մարկոս եպս. Հովհաննիսյանը:

Համաձայն ընթացակարգի՝ Սրբոց Հակոբյանց միաբանության անդամները մինչ հոգեհանգստյան արարողությունը կգումարեն պատրիարքի տեղապահի ընտրության ժողով: Տեղապահը կստանձնի պատրիարքի պարտականությունները, 40 օրվա ընթացքում կկազմակերպվեն նոր պատրիարքի ընտրություններ: Համաձայն Հակոբյանց միաբանության կանոնադրության, պատրիարքի հուղարկավորությունից 40 օր անց միաբանության անդամները փակ գաղտնի քվեարկությամբ կընտրեն Երուսաղեմի հայոց նոր պատրիարքին:

Տես էջ 3

# Սերժ Սարգսյանի վարկանիշն ավելի բարձր է, քան ՀՀԿ-ինը, ըստ Գալուստ Սահակյանի



ՀՀԿ փոխնախագահ **Գալուստ Սահակյանը** երեկ լրագրողներին տեղեկացրեց, որ կուսակցությունը պատրաստվում է դեկտեմբերին տեղի ունենալիք համագումարին, որի ընթացքում նախագահի թեկնածու են առաջադրելու եւ ապա սկսելու են քարոզչական աշխատանքի նախապատրաստությունը:

«**Ազգը**» հետաքրքրվեց Գ. Սահակյանից, թե արդյոք նոր, եռակողմ կոալիցիոն հուշագրի անհրաժեշտություն կա, ինչի մասին օրումեջ խոսում է մամուլը. «Չկա նման քննարկում, մեզ մոտ նման բան չի քննարկվում, անհրաժեշտությունը հո օդում չի լինում, պիտի քննարկվի, չէ՞»: Իսկ արդեն ասուլիսում, պատասխանելով այն հարցին, թե ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի միջեւ բանակցություններ կա՞ն, ինչպես որ մամուլն է գրում՝ նշելով, թե վարչապետի պաշտոնն ու քանի՞ նախարարական պորտֆել է ուզում ԲՀԿ-ն. չէ, որեւէ բանակցություն ԲՀԿ-ի եւ ՀՀԿ-ի միջեւ այժմ տեղի չի ունենում, եւ անհասկանալի է՝ ինչո՞ւ պետք է բանակցեն, երբ կա կոալիցիոն հուշագիր, նոր ասելիք էլ չկա: Իսկ թե ի՞նչ գին է վճարվելու ԲՀԿ-ին՝ Սերժ Սարգսյանին որպես նախագահի թեկնածուի սատարելու համար, Սահակյանը պատասխանեց երբեմն դրսեւորվող երգիծանքով. «Դոլարի եւ եվրոյի կուրսը փոխվի՝ այն ժամանակ էլ կասենք»: Ու հավելեց, որ ուժեղն իրենք են, ու որ ասում են բանակցել՝ ուժեղի հետ են բանակցում, ուժեղն էլ կարող է բոլորի հետ համագործակցել:

Գ. Սահակյանն իր խոսքում ասել էր, թե Սերժ Սարգսյանի վարկանիշն ավելի բարձր է, քան ՀՀԿ-ինը: Սերժ Սարգսյանի վարկանիշն այնքան բարձր է, որ նա նորից նախագահ կդառնա, քանի որ չկա մի այնպիսի թեկնածու, որը կարողանա մրցակցել գործող նախագահի հետ: Այդ կարծիքն առաջարկեցինք բացել եւ մանրամասնել՝ կանգ առնելով այն պահի վրա, թե ինչու է ՀՀԿ-ի վարկանիշն ավելի ցածր. «Ոչ թե ՀՀԿ-ի ռեյտինգն է ցածր, այլ նախագահի ռեյտինգն է բարձրացել, ու դա նրանից է, որ նա ոչ միայն ՀՀԿ նախագահն է, այլ նաեւ երկրի նախագահը. առանձնացել ու անհատականություն է դարձել, դա ՀՀԿ-ի վերլուծությունների արդյունքում է: Իսկ ՀՀԿ-ի ռեյտինգը ցածր չէ, սահմանված չափի է»: Նա ոչ ԲՀԿ ղեկավար Գագիկ Ծառուկյանին, որն էլ ԲՀԿ-ական Վարդան Օսկանյանին նախագահի թեկնածուի դերում չէր տեսնում՝ Ծառուկյանը տարիների ընթացքում չինովնիկ դառնալու որեւէ ձգտում չի դրսեւորել, Վարդան Օսկանյանն էլ երբեք գլոբալ քաղաքականության մեջ չի եղել (ի պաշտոնե արտաքին քաղաքականությունը 10 տարի կռողը քաղաքականությունից դո՞ւրս է եղել- Մ.Խ.), ընդամենն ԱԳ նախարար է եղել, այս ու այն երկիր է գնացել, մի գյուղացու տուն անգամ չի գնացել: Իսկ որ Հայաստանում ԱՄՆ դեսպանը Օսկանյանին սատարող հայտարարություն է արել, ըստ Գ. Սահակյանի՝ «Կասկածներն էլ ավելի խորացան, որ նա զբաղվել է փողերի լվացմամբ: Թե չէ ինչո՞ւ կարծիք չհայտնեց, ասենք, Չինաստանի կամ Ճապոնիայի դեսպանը: Լավ գիտեմ Օսկանյանին: Ուզում եմ հասկանալ՝ ո՞վ կբերի 2 մլն դոլար փող կտա Օսկանյանին կամ մեկ ուրիշին, ու ասի՝ «ոնց ուզում ես բարեգործություն արա»: Բարեգործը ծրագիր է տալիս»: Միաժամանակ նա ասաց, թե չէր ուզենա, որ Օսկանյանը հանցագործ համարվի, այդ դեպքում, ուրեմն, 10 տարի հանցագործի հե՞տ են աշխատել, եւ եթե Օսկանյանը անմեղ է՝ անպայման Օսկանյանից ներողություն են խնդրելու: Համենայն դեպս, ըստ ՀՀԿ փոխնախագահի, որեւէ մեկն այսօր դեռ իրավունք չունի մեղադրելու Օսկանյանին, ոչ էլ նրանից անձեռնմխելիություն է վերցվել, ուղղակի ուրիշ ձեւով հնարավոր չէ նայել նրա բանկային հաշիվները, դա հնարավոր է միայն որպես մեղադրյալի կցելով գործին:

Հարցեր եղան այն մասին, թե վտանգի մասին իմանալով ՀՀԿ-ն այնուամենայնիվ էժան փուչիկ է պատվիրել մայիսի 4-ի միջոցառման համար. «Է, լավ, էլի, ՀՀԿ-ն իմացել է վտանգի մասին ու բերել է, որ պայթե՞ն», հակադարձեց Գ. Սահակյանը՝ իրոնիայի մի չափաբաժին էլ բաց թողնելով, թե շուտով կսկսվի քարոզարշավը, բոլորը կկպչեն Հանրապետականին, փուչիկները կպայթեցնեն ու կհանգստանան:

**Մ. Խ.**

# Կաթսայում եռացողը դատարկ ջուր է

*1-ին էջից*

Բոլոր դեպքերում, քաղաքական դաշտն իմացողներն ամենասկզբից էլ, այն պահին, երբ «Ազատ դեմոկրատները» ու «Ժառանգությունը» նախընտրական դաշինք էին կազմում, մեկին-մեկ կանխագուշակում էին այն, ինչ հիմա է տեղի ունենում:

Ողջ շաբաթ մերձքաղաքական շրջանակները նախապատրաստում-հասունացնում էին մի իրավիճակ, որ ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը չդիմանա ու խոսի՝ էլ ինչ ասես գրեցին, թե Ռուսաստանից է պոկվել, ինքն է առաջադրվելու նախագահի թեկնածու, Էս է՝ նոր կոալիցիոն հուշագիր է ստորագրվելու, Ծառուկյանն այլեւս քաղաքական իրողություններից դուրս է եւ այլն, այսինքն՝ նույն տեխնոլոգիաներն էին կիրառվում մամուլում, ինչ խորհրդարանական ընտրություններից առաջ, բայց ԲՀԿ առաջնորդից ինչ-որ որոշակիացում պոկել ոչ մեկին այդպես էլ չհաջողվեց՝ Ծառուկյանը հրապարակորեն լռում է, ու հավանաբար դա նրան կհաջողվի եկող շաբաթ՝ Ազգային ժողովի հերթական նստաշրջանից... բացակայելով: Այնպիսի զգացողություն է՝ կարծես բոլորը մի շատ կարեւոր բանի են սպասում:

Միգուցե իսկապես եւ տարածաշրջանի, եւ տարածաշրջանում խաղացող պետությունների նախագահական ընտրությունները ինչ-որ տեսանելի եւ անտես անդրադարձներ ունենում են մեր քաղաքականների վրա՝ գոնե մոդելավորումը հասկանալու իմաստով. Վրաստանի ընտրությունները տեսանք-մարսեցինք, հիմա մերոնք ուզում են տեսնել-զուգահեռել ԱՄՆ-ի՝ նոյեմբերի 6-ին կայանալիք նախագահական ընտրությունները, ու այնտեղի քաղաքական կուրսը փոխվի-չփոխվի, Օբաման ընտրվի, թե Ռոմնին՝ տեսնելու ու վերլուծելու բան կլինի: Այնպես որ՝ որ ասում են, թե հա՜, հուշագիր է էսօր-էգուց, հա՜, Ծառուկյանն է հայտարարելու, թե սատարում է Սերժ Սարգսյանին, կամ էլ, ընդհակառակը, ինքն է առաջադրվում, առայժմ վերը նշված «միգուցեի» եւ մի շարք այլ «միգուցեների» տրամաբանությամբ կիետաձգվի մինչեւ նոյեմբերի կեսերը, մանավանդ Գալուստ Սահակյանն ասաց՝ բանակցություն չկա ԲՀԿ-ի հետ, նոր հուշագրի հարց էլ չի քննարկվում, ու էլի մանավանդ՝ Հանրապետականը դեկտեմբերի 2-ին է համագումար անում եւ նախագահի թեկնածու առաջադրում:

ՀԱԿ-ում նույնպես արշալույսները խաղաղ չեն, խոսք է գնում մի շարք հիմնարար հարցերում նրա հայտնի անդամների կողմնորոշումների տարբերության մասին: Էլ չասած, որ այդ նույն նոյեմբերի կեսերին սպասել ու տեսակետ հայտնել՝ սեփական թեկնածո՞ւով է ՀԱԿ-ը գնում նախագահական ընտրությունների, թե ԲՀԿ-ի թեկնածուին է սատարում, երբ ԲՀԿ-ում էլ դեռ չգիտեն՝ ո՞ւմ են սատարում, այսպիսի շռայլություն ՀԱԿ-ն իրեն թույլ տալ չի կարող, մանավանդ՝ ԲՀԿ-ի թեկնածուին կտրականապես չպաշտպանելու տեսակետ եւս կա նախապես, ու Պետրոս Մակեյանը ինչեցրել է Նիկոլ Փաշինյանին որպես նախագահի թեկնածու առաջադրելու տարբերակը: Ու թեեւ Նիկոլը ժխտել է տարաձայնությունները ՀԱԿ-ում (կոնկրետ Լեւոն Զուրաբյանի հետ) եւ ասել, որ նախագահի թեկնածու լինելու հավակնություն էլ չունի Տեր-Պետրոսյանի առաջադրման դեպքում, սակայն անզեն աչքով էլ տեսանելի է, որ տեսակետներն ավելի հեռանալու, քան մոտենալու միտում ունեն եւ դա տանում է ՀԱԿ-ի վերջնական պառակտման: Իսկ ո՞վ հաստատ կարող է իմանալ, թե Տեր-Պետրոսյանն առաջադրվելու է:



# «Արմենտելը» տուգանվեց 30 մլն դրամով

## *«Հայփոստը», «Հայաստանի էլեկտրական ցանցերը» եւ «Հարավկովկասյան երկաթուղին» նախազգուշացվեցին*

**Տնտեսական մրցակցության պաշտպանության հանձնաժողովի երեկ տեղի ունեցած նիստում քննվել են մի շարք քաղաքացիներից ստացված դիմում-բողոքները «Արմենտել», «Հայփոստ», «Հայաստանի էլեկտրական ցանցեր» (ՀԷՑ) եւ «Հարավկովկասյան երկաթուղի» ընկերությունների գործունեության վերաբերյալ:**

**տոմսերի վաճառքի եւ դրանց վերադարձի խնդիրներին: Ըստ բողոքների, եթե անհրաժեշտ է լինում տոմսը վերադարձնել, ապա ընկերությունը էլեկտրոնային տոմսերի դեպքում դրամը ընդհանրապես հետ չի վերցնում, իսկ թղթայինի դեպքում՝ գանձում է տուգանք՝ տոմսի արժեքի 15 տոկոսի չափով, ինչպես նաեւ տոմսերի ձեռքբերման համակարգը**




**Բացելով նիստը՝ հանձնաժողովի նախագահ Արտակ Շաբոյանն ասաց, որ քաղաքացիների ստացած բողոքների հիման վրա հանձնաժողովը քննարկում է այդ ընկերությունների հարցերը եւ խախտումների դեպքում տուգանում: Սակայն, նա կարեւորեց այն հանգամանքը, որ քաղաքացիների բարձրացրած հարցերը իրենց լուծումները ստանան:**

**«Ալիաս» ընկերությունը դիմում-բողոք էր ներկայացրել հանձնաժողով, տեղեկացնելով, որ ընկերության աշխատակիցները օգտվել են «Արմենտելի» «Էքսկլյուզիվ բիզնես» սակագնային փաթեթից, որով ինտերնետի 1 ՄԲ-ի արժեքը 49 դրամ է: Այսպես նշված է նաեւ տեղեկատվական բուկլետների վրա: Սակայն որոշ ժամանակ հետո պարզվել է, որ իրենցից գանձվել է 90 դրամ: Ըստ «Արմենտելի», սպառողները վճարել են ավելի բարձր սակագին, քանի որ նրանց նկատմամբ կիրառվել է «Ինտերնետ բոլորի համար» սակագնային փաթեթը, որի 1 ՄԲ-ն արժե 90 դրամ, իսկ «Էքսկլյուզիվ բիզնես» փաթեթի համար այդ սակագինը չի կիրառվել, քանի որ դրա համար սպառողները պետք է հատուկ կարգավորումներ իրականացնեն: Սակայն այդ մասին «Արմենտելն» իր բաժանորդներին չի տեղեկացրել եւ, ըստ հանձնաժողովի եզրակացության, մոլորեցրել է սպառողներին: Այդ վարքագիծը անբարեխիղճ մրցակցության դրսեւորում է, ինչի համար ընկերությունը տուգանվեց 30 մլն դրամի չափով:**

**Հաջորդը Երեւան քաղաքի բնակիչ Աշոտ Ոսկանյանի դիմում-բողոքն էր «ՀԷՑ»-ին, ըստ որի, իր բնակարանը զրկված է էլեկտրաէներգիայից, եւ ինքը խնդրել է ընկերությանը իր հետ կնքել մատակարարման պայմանագիր: Ընկերությունը պատասխան գրությունում նշել է, որ բնակիչը տեւական ժամանակ օգտվել է մեկ այլ քաղաքացու անվամբ գրանցված բաժանորդային քարտից, որի պարտքը կազմում է 645 հազար դրամ, եւ միայն այդ պարտքը մարելուց հետո նրա հետ կկնքվի պայմանագիր: Բնակիչը դիմել էր հանձնաժողով, որը վարույթ էր հարուցել: Վարույթի ընթացքում վերոնշյալ խնդիրը լուծվել է, ընկերության եւ բնակչի միջեւ կնքվել է պայմանագիր եւ վերջինը հնարավորություն է ստացել սպառելու էլեկտրաէներգիա:**

**«Հարավկովկասյան երկաթուղի» ընկերության գործունեությունից դժգոհողների բողոքը վերաբերում է այնպիսին է, որ թույլ չի տալիս միաժամանակ ձեռքբերել մեկնման եւ հետվերադարձի տոմսերը, ինչը լուրջ անհարմարություններ է պատճառում Վրաստան հանգստի մեկնողներին: Հարուցված վարույթի ընթացքում «Հարավկովկասյան երկաթուղին» վերոնշյալ խնդիրների հիմնական մասը լուծել է եւ պարտավորություն է ստանձնել շտկելու դեռեւս առկա խնդիրները:**

**«Հայփոստի» դեպքում նամակները տեղ են հասնում ուշացումով եւ հաճախ ուղարկվում են սխալ հասցետերերի, հանձնումը հավաստող հետադարձ ծանուցագրերում բացակայում է հանձնման ամսաթիվը: Արձանագրվել են նույնիսկ այնպիսի դեպքեր, երբ նույն հասցեով առաքվող նամակը հանձնվել է հասցեատիրոջը, սակայն հաջորդ առաքման ժամանակ հետ է վերադարձվել՝ «անհայտ հասցե» նշումով: Վերոնշյալ խախտումները խոչընդոտում են հատկապես պետական մարմինների բնականոն աշխատանքին՝ ստեղծելով խնդիրներ նաեւ տնտեսվարողների համար: Հանձնաժողովը պահանջեց «Հայփոստից» զերծ մնալ նման գործելաոճից, վերացնել խախտումները եւ սպառողներին մատուցել որակյալ ծառայություններ:**

**ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
**«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ**
Երեւան 0010, Հանրապետութեան 47
e-mail: azg@azg.am, azg2@arminco.com
**www.azg.am**
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ հեռ. 060 271117
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ հեռ. 060 271113
Հաշվապահութիւն (գովազդ) հեռ. 582960, 060 271112
Լրագրողների սենեակ հեռ. 060 271118
Համակարգչ. ծառայութիւն հեռ. 060 271115
*Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն*
հեռ 060 271114, 010 529353
Համակարգչային շարուածքը՝ «Ազգ» թերթի

Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:

"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 60 271117
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

# Ադրբեջանը չի կողմնորոշվում՝ իր նախնիները կովկասցի ալբանացինե՞րն են, թե՞ թուրքերը



«Հայաստանը պետք է կոնկրետ քայլեր կատարի, աշխարհին ներկայացնի իրական փաստեր պատմական անցյալի տարածաշրջանի երկրների ձեւավորման մասին՝ որպես հակակշիռ ադրբեջանական կողմից տարածվող կեղծ պատմական փաստաթղթերի», ասում է քարտեզագիր պատմաբան **Ռուբեն Գալչյանը**՝ հավելելով, որ եթե վերոնշյալ հարցի առումով շտապողականություն եւ համակարգված աշխատանք չդրսեւորվի, ապա հետեւանքները շատ ավելի վատ կլինեն: Նրա ներկայացմամբ՝ պատմության, քարտեզի ու սահմանների խեղաթյուրումը, հատկապես նոր ձեւավորվող երկրների առկայության պարագայում, ընդունված մարտավարություն է, որի միջոցով երկրները կարողանում են պահպանել իրենց ներկայությունն այս կամ այն տարածքում:

Դրա վառ օրինակը ադրբեջանական մշակույթի եւ պատմության խեղաթյուրված ներկայացումն է, որն արվում է պետական մակարդակով: Նա փաստում է, որ նախկին ԽՍՀՄ կազմից Ադրբեջանը միակ պետությունն է, որ չունի ազգային ինքնություն եւ հենց սկզբից՝ 1918 թ., երբ հայտնվեց քարտեզի վրա, ի հակադրում աշխարհագրական եւ պատմական փաստերի, օգտագործվեցին կոմունիստական եւ պանթուրքիստական բոլոր հնարավոր մարտավարությունները ազգային էթնոսի եւ մշակույթի ստեղծման համար:

«Երբ դու չունես պատմություն եւ ազգային մշակույթ, դրանց ձեռքբերման ամենահեշտ ճանապարհը հարեւան երկրների մշակույթը գողանալն է: Դրա սկիզբը դրվեց 1918-ին եւ ակտիվ կերպով շարունակվեց մինչեւ 80-ականները: Այդ ժամանակ Ադրբեջանը, որպես անկախ պետություն, ներքին ռեսուրսներն ու հսկայական գումարներ օգտագործեց ամբողջ աշխարհին հորինված պատմություն հրամցնելու համար: Այդ նպատակին հասնելու համար նրանք մի կողմից հավաստիացնում էին, որ իրենց նախնիները եղել են կովկասցի ալբանացիներ, մյուս կողմից, երբ իրենց անհրաժեշտ էր ձեռք բերել Թուրքիայի բարեկամական վերաբերմունքը, իրենց նախնիներին անվանեցին թուրքեր, ովքեր այդ տարածաշրջան էին եկել Կենտրոնական Ասիայից:

Նա շեշտում է, որ ադրբեջանցի պատմաբանները հավաստիացնում են, թե հայերը այս տարածաշրջանում են ապրել 1818-ից հետո, երբ Ռուսաստանը գրավեց այդ տարածքներն ու իբր Իրանից եւ Թուրքիայից հայերին այդտեղ բնակեցրեց:

Սակայն այս խեղաթյուրումները կարելի է հեշտությամբ եւ հիմնավոր փաստերով հերքել: Գալչյանը նախ հիշեցնում է հույն փիլիսոփա Ստրաբոնին, որ իր «Պատմություն» աշխատությունում 60 էջ է նվիրել Հայաստանի պատմությանը՝ գրելով, որ Հայաստան պետությունը տարածվում էր Կուր գետից մինչեւ Վանա լիճ: Իսլամական քարտեզագիրներն ու աշխարհագետները 7-9-րդ դարերի իրենց աշխատություններում Հայաստանը ներկայացնում են որպես անկախ պետություն, իսկ Ադրբեջանը՝ Իրանի պրովինցիա:

Գալչյանը շեշտում է, որ ադրբեջանի ժողովուրդը մինչ այսօր չունի սեփական այբուբենը: Վերջին 80 տարվա ընթացքում նրանց այբուբենը 3 անգամ փոխվեց՝ արաբատառից անցան լատինատառի, հետո՝ կիրիլիցայի, իսկ 1992-ից կրկին վերադարձան լատինատառի: «Հենց դա է պատճառը, որ ներկայիս ադրբեջանցի երիտասարդությունը չի կարողանում կարդալ պատմական ձեռագրերը, հետեւաբար պատմական գրականությունը շատ կամային է մեկնաբանվում»:

Ադրբեջանի պատմական, մշակութային եւ աշխարհագրական կեղծումները եւ իրական պատմությունը աշխարհին ներկայացնելու համար Ռուբեն Գալչյանը հերթական գիրքն է տպագրել, որը կոչվում է «Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները»:

Նոր գրքում ներկայացված են վերլուծություններ, պատմական, էթնիկ եւ աշխարհագրական կեղծումների ու փոփոխությունների մասին, որոնք օգտագործում են ադրբեջանցի պատմաբաններն ու աշխարհագետները: Հատուկ շեշտադրությամբ է ներկայացված, թե ինչպես են ադրբեջանցիները յուրացնում հայկական եւ իրանական տարածքներն ու մշակույթը: Վերոնշյալ աշխատանքում ներկայացված են 56 վերլուծություն, հունա-հռոմեական, քրիստոնեական եւ իսլամական քարտեզներ, որոնք պատմական արժեք են ներկայացնում եւ փաստացի ապացուցում, որ մինչեւ 1918 թ. Արաքս գետի հարավային կողմում նման երկիր չի եղել:

Այս գիրքը կարեւորվում է այն առումով, որ Ադրբեջանը տասնյակ գրքեր է հրատարակում հակահայ քաղաքականությամբ եւ շարունակում հաստատել իր կեղծ պատմությունը: Ադրբեջանն այս առումով գումար չի խնայում, քաղցրականների գրքերը հրատարակում է մի քանի լեզուներով եւ անվճար բաժանում տարբեր երկրների դեսպանատներին, գրադարաններին: Հենց այս ֆոնին վերոնշյալ գրքի արժեքն ավելի է կարեւորվում:

«Ադրբեջանական պատմաաշխարհագրական զեղծարարությունները» գիրքը տպագրվել է Լոնդոնում, անգլերեն լեզվով, 2500 տպաքանակով: Մեծ Բրիտանիայում Հայաստանի դեսպանատան եւ արտաքին գործերի նախարարության աջակցությամբ Հարվարդի, Մասաչուսեթսի եւ Լոնդոնի համալսարանների գրադարանները ստացել են գրքի օրինակներ:

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# Ինքնաթիռի իջեցման համար Ռուսաստանը...

*1-ին էջից*

**Թերեւս այդ հանգամանքով պետք է պայմանավորել դոկս. Ջունեյթ Ուլսեւերի «Ռուսաստանը ինչպե՞ս է լուծելու ինքնաթիռի միջադեպի վրեժը» վերնագրով «Յուրթ» թերթի հոկտեմբերի 17-ի համարում հրապարակված հոդվածը: Ինքնաթիռի իջեցումը նա պայմանավորում է արտգործնախարար Դավութօղլուի անձնական նախաձեռնությամբ: Ըստ հեղինակի, Թուրքիայի արտգործնախարարը իր համար անհայտ աղբյուրից ինքնաթիռում զենքի եւ զինամթերքի առկայության մասին տեղեկություն է ստանում, թույլտվության խնդրանքով հիկույն դիմում է վարչապետ Էրդողանին, որի հավանությամբ էլ ինքնաթիռն իջեցնում է Անկարա:**

**Ուլսեւերի կարծիքով, այդ տեղեկությունը հայթայթել է Ազգային հետախուզական կազմակերպությունը, կամ էլ մեկ այլ երկրի գաղտնի ծառայություններն են տրամադրել վերջինին, որպեսզի Ռուսաստանին հակադրեն ընդդեմ Թուրքիայի: Այնուհետեւ հեղինակը շարունակում է. «Ինձ համար ակնհայտ է, որ Ռուսաստանն անպայման վրեժ կլուծի ինքնաթիռի իջեցման համար: Դա է ենթադրում Ռուսաստանի մեծ տերության կարգավիճակը: Պարզապես Դավութօղլուն կուլ տվեց խայծը եւ անհասակ ջրհորից դուրս գալու համար առանց մտածելու «ինքնաթիռ իջեցնելու գործողությունը» ձեռնարկեց, սակայն շատ վատ պոզահարվեց: Ահմեդ Դավութօղլուն ինքնասիրապետսումն ամբողջովին կորցրածի տպավորություն է գործում: Թեեւ նա գրգռված ինքնասիրությամբ ոչ մի կերպ չի մարսում իր իսկ գործած զանցանքները, բայց որ խուճապի է մատնված՝ ակնհայտ է»:**

**Այդ խուճապը ըստ երեւույթին ակնառու է դարձել նախագահ Պուտինի հայտարարությամբ. «Բացի ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդից, որեւէ երկիր չի կարող կամք թելադրել Ռուսաստանին, թե ում հետ զենքի ինչպիսի առեւտուր պետք անի: Զենքի առեւտրի մասին Ռուսաստանի ստորագրած համաձայնագրերը օրինական են»: Ահա թե ինչու հաջորդ օրը Դավութօղլուն պատասխանելու կարիքն զգաց, ընդ որում, արդարանալով. «Ինքնաթիռի միջադեպը չի հանգեցրել Թուրքիա-Ռուսաստան ճգնաժամի: Այդպիսի բան չկա: Մենք ի սկզբանե խորհրդակցել ենք ռուսական կողմի հետ, միջադեպի առնչությամբ իրազեկել Թուրքիայում Ռուսաստանի դեսպանին: Հարկ չեմ համարում անդրադառնալ ռազմական հումքի բնույթին: Իմ լավագույն բարեկամ Լավրովն արդեն ասաց, որ ռուս-թուրքական հարաբերությունների մթագնումը որեւէ մեկին չի հաջողվի: Հետեւաբար խնդիրը Ռուսաստանը չէ, այլ սիրիական ճգնաժամը»:**

ՀԱՅԱՍՏԱՆ

## Կոչ նախագահին. իրական պայքար տարեք կոռուպցիայի դեմ

**Սփյուռքահայ ներդնողների շահերի պաշտպանության նախաձեռնող խումբը գործարար Էդմոնդ Խուդոյանի գլխավորությամբ նախաձեռնել է ստորագրահավաք, որով կոչ են անում եւ պահանջում նախագահ Սերժ Սարգսյանից իրական պայքար տանել կոռուպցիայի դեմ: «Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը միայն խոստումներ է տալիս կոռուպցիայի դեմ պայքարելու մասին, խոսում է վերեւներից ու գլխից բռնելու մասին, սակայն իրական քայլեր այդպես էլ չեն արվում: Սա համայն հայության խնդիրն է, քանի որ կոռուպցիայի զոհն է մեր հայրենակիցների մեծ մասը:**

**www.change,org/petitions/president-serzh-sargsyan-stop-corruption-in-armenia էջին են միացել հարյուրավոր մարդիկ, ովքեր զգացել են կոռուպցիոն երեւույթների զազրելի հետեւանքներն ու պահանջում են նախագահից՝ զորեղ լինել երկրում արմատացած կոռուպցիայի դեմ պայքարում:**

Հ. Հ.

## Հայ բարերարների ճեմուղու բացման հանդիսությունը՝ այսօր

**Այսօր, ժամը 17-ին Երեւանի Օղակաձեւ զբոսայգում (Մ. Նալբանդյանի արձանի հարեւանությամբ) տեղի կունենա ՀՀ սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ ստեղծված Հայ բարերարների ճեմուղու բացման հանդիսությունը:**

**Սփյուռքի նախարարության նախաձեռնությամբ եւ պատվերով մայրաքաղաքի սրտում կանգնեցվեցին հայազգի մեծ զավակներ, բարերարներ՝ Պողոս Նուպարի, Ալեքսանդր Մանթաշյանի, Ալեք Մանուկյանի, Գալուստ Գյուլբենկյանի, Միքայել Արամյանցի, Հովհաննես Լազարյանի հուշակոթողները եւ բարերարության հավաքական կերպարը խորհրդանշող մեկ հուշակոթող:**

**Ողջույնի խոսքով հանդես կգան ՀՀ սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը եւ Հայկական բարեգործական ընդհանուր միության նախագահ Պերճ Սեդրակյանը:**

**Կինչի ՀՀ պետական օրհներգը: Ժապավենը կկտրեն Գալուստ Գյուլբենկյան եւ Ալեք Մանուկյան դպրոցների բարձր առաջադիմություն ցուցաբերած աշակերտները:**

**Բարձրաստիճան հյուրերի մուտքը կողջունեն ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի փողային նվագախումբը եւ ՀՀ ՊՆ «Զորական» երգի համույթը:**

## Երուսաղեմի հայոց պատրիարքի հոգեհանգստյան...

*1-ին էջից*

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 12-ին երկարատեւ հիվանդությունից հետո կյանքի 93-րդ տարում վախճանվեց Երուսաղեմի հայոց պատրիարքը: Մ. Նահանգների Արեւելյան թեմի առաջնորդի պաշտոնում 24 տարի ծառայելուց հետո Թորգոմ արքեպիսկոպոսը 1990 թ. մարտի 22-ին ընտրվեց Երուսաղեմի 96-րդ պատրիարք:

1994 թ. օգոստոսի 19-ին Վազգեն Ա կաթողիկոսի մահից հետո նշանակվեց կաթողիկոսական տեղապահ, մինչեւ Գարեգին Ա կաթողիկոսի գահակալումը Մայր աթոռին: Թորգոմ պատրիարքը 20 մենագրությունների հեղինակ է, որոնց թվում են բանաստեղծական 3 ժողովածու, հայկական սուրբ պատարագի ուսումնասիրություն, Կոմիտասի երաժշտությանը նվիրված մենագրություն, Հայոց ցեղասպանությանը նվիրված գրքեր եւ Երուսաղեմի սուրբ վայրերի մանրամասն ուղեցույց:

Երուսաղեմի հայոց պատրիարքության պատմությանն ու առաքելությանը քաջածանոթ շրջանակներին զարմացրել է Մայր աթոռ Սբ Էջմիածնի՝ համեմատաբար ցածր մակարդակի պատվիրակությամբ մասնակցությունը Թորգոմ պատրիարքի հուղարկավորությանը: Նրանց կարծիքով՝ Ամենայն հայոց հայրապետի անձնական հանդիսապետությամբ պետք է կատարվեին սգո արարողությունները՝ կարեւորելով Հայ եկեղեցու անփոխարինելի ներկայությունը քրիստոնեության մայրաքաղաք Երուսաղեմում: Փորձագետներին տարօրինակ է թվում նաեւ ՀՀ իշխանությունների բացակայությունը այդ արարողություններից: Կրոնաեկեղեցական նշանակությունից բացի, Երուսաղեմի մեր պատրիարքությունը, նրա ազդեցիկ ներկայությունը աշխարհի այդ զգայուն մասում՝ քաղաքական մեծ նշանակություն ունի մեր երկրի ու ժողովրդի համար:

Ոմանք հակված են այդ բացակայությունները մեկնաբանելու պատրիարքի առաջիկա ընտրություններին միջամուխ չլինելու մտահոգությամբ, ինչը, մեր հարցափորձած մասնագետները համարում են անտեղի: Ով ասես՝ իսրայելցիները, պաղեստինցիք, Վատիկանը, հույները եւ ուրիշներ չեն միջամտելու հաջորդ պատրիարքի ընտրությանը, հայկական կո՞ղմն է, որ պիտի բացակայի, առարկում են նրանք:

Երեկ ուշ գիշերին Երուսաղեմի պատրիարքության դիվանից ստացված հաղորդագրությունից տեղեկացանք, որ Սրբոց Հակոբյանց միաբանության ընդհանուր ժողովում ձայների ճնշող մեծամասնությամբ տեղապահ է ընտրվել Արիս արք. Շիրվանյանը, որը պետք է նախագահի Թորգոմ պատրիարքի հուղարկավորության արարողությունը եւ քառասունքից հետո պետք է ձեռնարկի նոր պատրիարքի ընտրությունը:

Հ. Հ.

## Հիպոկրատի երդմանը հավատարիմ

Խորին երախտագիտությունս եմ հայտնում Երեւանի Մ. Հերացու անվան պետական բժշկական համալսարանի թիվ 1 հիվանդանոցային համալիրի ընդհանուր եւ ինվազիվ նեյրովիրաբուժության կլինիկայի ղեկավար, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ռուբեն Ֆանարջյանին ու նույն համալիրի Լեւոն եւ Քլոտիա Նազարյանների անվան ռադիոլոգիայի կենտրոնի բժիշկ-ռադիոլոգ, ԵրՊԲՀ ճառագայթային ախտորոշման ամբիոնի ասիստենտ Աննա Ֆրանգուլյանին՝ իմ կրկնակի հետազոտություններն անվճար կատարելու, մասնագիտական բարձր կարողությունների եւ մեր ժամանակների համար խիստ անսովոր՝ մարդկային ու հոգատար վերաբերմունքի համար: Նրանք հավատարիմ են Հիպոկրատի երդմանը, որն ընդօրինակելի է շատ շատերի համար:

ԼԻԼԻԹ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Վանաձոր

Ապացուցված է, որ սուրբ վայրերը, որոնք միտված են լինելու խաղաղության երկրամասեր, մեծ մասամբ վերածված են աշխարհի ամենատառապյալ շրջանների: Եվ հայերը, որոնք ավանդաբար հակված են եղել բնակվելու տագնապալի տարածքներում, ավելի քան երկու հազարամյակ անմասն չեն մնացել Երուսաղեմի ճակատագրից: Ենթադրվում է, որ հայերը Երուսաղեմում հաստատվել են դեռեւս Տիգրան Մեծ օրոք, երբ վերջինս մ. թ. ա. 95-55 թվերի իր իշխանության որոշ ժամանակահատվածում Երուսաղեմը համարել է իր հսկայական կայսրության մի մասը: Բայց Երուսաղեմի

Մանուկյան արքեպիսկոպոսը ընտրվել էր 1990-ի մարտի 22-ին, այնպես որ, որպես պատրիարք, նա քսաներկու տարի է ծառայել: Արթուր Հակոբյանը իր հավուր պատշաճի սրտառուչ մահախոսականում մեծ գնահատանքով է խոսում պատրիարքի ձեռքբերումների մասին:

Դժբախտաբար, պետք է նշել, որ նշված լավ գործերը նսեմանում են պատրիարքարանից բխող խնդիրների պատճառով: Պատրիարքը միանշանակ հմուտ մտավորական էր, կայացած գիտնական, ինչպես իր անվանակից Թորգոմ պատրիարք Գուշակյանը: Բայց նա ձեռնհաս կառավարիչ չէր: Ահա

դեմի ապագայի հարցով բանակցություններ են անցկացրել, հայկական պատրիարքարանը օրակարգի հարց է եղել իր զբաղեցրած պատմական անշարժ գույքի պատճառով:

Հրեաներից եւ պաղեստինցիներից բացի՝ թուրքերն էլ են շահագրգռված նրա ճակատագրով, հատկապես այն պատճառով, որ Հայոց ցեղասպանությանն առնչվող արխիվային հսկայական նյութեր կան այնտեղ: Հունական պատրիարքությունը հավիտենական «փուշ» է եղել իր հայկական գործընկերոջ կողին՝ հետապնդելով ոտնձգության ագրեսիվ քաղաքա-

նակեց պատրիարքական փոխանորդ: Ներկա դրությամբ միաբանությունը դարձյալ պետք է ընտրի տեղապահ մինչեւ հաջորդ պատրիարքի ընտրությունը, որը պետք է կայանա նախորդի մահվանից 40 օր անց: Ով որ ընտրվի տեղապահ, իրավունք է ստանալու վերահսկելու զարգացումները եւ իր հայեցողությամբ անցկացնելու ընտրությունները:

Սրբազան վայրերը կառավարվում են դեռեւս օսմանյան կառավարիչ սուլթան Աբդել-Մեջիդի օրոք հրապարակված «ստատուս քվոյի» օրենքներով: Հայկական պատրիարքարանն ունի իր ներքին օրենք-

պատնեշ են հանդիսացել դրականորեն տրամադրված հայկական կուսակցությունների եւ նույնիսկ Մայր աթոռ Սբ Էջմիածնի ազդեցություններին: Եկեղեցական վերջին ժողովի գումարման ժամանակ, օրինակ, Էջմիածնից ժամանած երկու պատգամավորների թույլ չէր տրված մասնակցելու ժողովին եւ կարդալու Վեհափառ հայրապետի ողջույնի խոսքը: Միաբանության անդամներից մեկն էր կարդացել ուղերձը՝ պատճառաբանելով, թե այդ երկու պատգամավորները «միաբանության անդամ չեն»:

Թե ով կլինի տեղապահ՝ հայտնի չէ: Անվանի եւ փորձառու կղե-

# Կարեւորագույն պահ Երուսաղեմի համար

**ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

հայ վանական դասի Սուրբ Հակոբյանց միաբանությունը 6-րդ դարից է սկսել իր գործունեությունը:

Երուսաղեմի վտանգներով հագեցած ճակատագիրը այլ կրոնական հավատի ներկայացուցիչների հետ կրելով, հայերը բախտավոր են եղել այն առումով, որ կարողացել են ժամանակի ընթացքում ձեռք բերել ինչպես անշարժ գույքի, այնպես էլ կրոնական, գիտական եւ մշակութային թանկարժեք գանձեր:

Թագավորներ, մտավորականներ եւ նույնիսկ հասարակ ուխտագնացներ անգնահատելի գանձերով հարստացրել են Սբ Հակոբավանքը, հավատ ընծայելով, որ միաբանությունը տեր կկանգնի այդ բոլորին: Մարդկային թուլությունը, սակայն, պատասխանատու անձանց մեջ երբեմն ավելի կարեւոր դեր է խաղացել, քան հավատը, եւ պատրիարքարանի ներքին խնդիրներին եկել են ավելանալու նաեւ արտաքին ուժերի հարուցած խնդիրները:

Սույն թվի հոկտեմբերի 12-ին ամենապատիվ Թորգոմ արք. Մանուկյանի վախճանմամբ միաբանությունն ու պատրիարքական աթոռը նոր մարտահրավերների առաջ են կանգնած՝ կապված նրան հաջորդող նոր պատրիարքի ընտրության գործընթացի հետ:

թե ինչու որոշ արժեքավոր ունեցվածքներ մենք կորցրինք իր կառավարման օրերին: Թե ո՞վ կհաջորդի նրան, մեզ միայն մնում է գուշակել:

Երուսաղեմի հայոց պատրիարքությունը վանական մի կառույց է, որ տեղի սուրբ վայրերը վերահսկում է Հույն ուղղափառ, Հռոմի կաթոլիկ, ինչպես նաեւ սիրիացիներին եւ ղպտիների պատկանող եկեղեցիների հետ միասին: Հայկական պատրիարքարանի տարածքը հին քաղաքի մեկ վեցերորդ մասն է զբաղեցնում: Դրան գումարած պատրիարքությունը ունի նաեւ կալվածքներ պատրիարքարանի տարածքից դուրս: Մինչեւ օրս արտաքին աշխարհը տեղեկացված չէ պատրիարքարանի անշարժ գույքի ունեցվածքի մասին եւ գուցե պատրիարքարանի ներսում էլ ոչ ոք ճշգրիտ տվյալներ չունի այդ մասին: Բայց համաշխարհային հայկական համայնքը միշտ էլ ստիպված է եղել օգնության ձեռք մեկնել պատրիարքարանից հնչող հուսահատ կոչերի առիթներով:

Երուսաղեմի պատրիարքությունը իր բոլոր հարստություններով եւ գանձերով շատերի ուշադրությունն է գրավել: Ամեն անգամ, որ Իսրայելն ու Պաղեստինը Երուսա-

կանություն սրբազան վայրերի հանդեպ հայերի ունեցած իրավունքների նկատմամբ, հատկապես Ծննդյան եւ Զատկվա ծիսակատարությունների օրերին: Այս բոլոր կողմերը ուշիուշով հետեւում են, թե ով է հաջորդելու պատրիարքին եւ ինչքանով են իրենց շահերը Երուսաղեմում ներկայացվելու:

Մեկ ուրիշ շահագրգիռ կողմ էլ Անթիլիասի աթոռն է, որ դեռեւս իր իշխանության ներքո է պահում Իրանի թեմը, հակառակ որ սառը պատերազմը վաղուց վերացել է, պարզապես նսեմացնելու համար Մայր աթոռ Սբ Էջմիածնի իշխանությունը:

Բաժանումը շարունակվում է հայկական եկեղեցու ներսում, եւ անթիլիասականները հավաստացած են, որ ամեն մի վրիպում Էջմիածնի կողմից նպաստելու է Կիլիկյան աթոռի ամրացմանը:

Թուրքիան իր հերթին սառեցրել է Ստամբուլի պատրիարքարանի կացությունը, թույլ տալով, որ իրենց հաճո անձը ստանձնի պատրիարքարանի կառավարումը, անտեսելով Էջմիածնի միջամտությունը:

Թորգոմ արքեպիսկոպոսի հիվանդությունից հետո միաբանությունը 2012 թվի հունվարի 30-ին Նուրհան արք. Մանուկյանին նշա-

ները, որով միայն միաբանության անդամները իրավունք ունեն մասնակցելու ընտրություններին:

Առաջին հայացքով ու տրամաբանական կարող է թվալ, քանի որ բացառում է արտաքին միջամտությունը, բայց պատմականորեն միշտ էլ հաջորդական կառավարությունները իրենց մասնակցությունը բերել են այս կամ այն ձեւով ուղղակի կամ անուղղակի միջոցներով: Եվ դա, անշուշտ, ընտրությունների արդյունքի վրա թողել էր իր ազդեցությունը: Մեր հիշողության մեջ թարմ է օրինակը ընտրված պատրիարք Տիրան արք. Ներսոյանի, որին հորդանանյան իշխանությունները վտարելով՝ փոխարենը գահին նստեցրին Եղիշե արք. Տերտերյանին:

Չնայած կատարված քայլը անօրինական էր, այդուհանդերձ արքեպիսկոպոս Տերտերյանը ապացուցեց, որ հիանալի դիվանագետ է, որը կարողացավ ճիշտ հունով եւ վարպետորեն առաջ տանել պատրիարքարանի գործունեությունը: Նշենք նաեւ, որ Երուսաղեմի ընտրյալ պատրիարքը չի կարող իր պաշտոնի գլուխն անցնել առանց Հորդանանի եւ Իսրայելի իշխանությունների հավանության:

Դժբախտաբար միաբանության ներքին օրենքներն ավանդաբար

րականներ հրաժարվել են իրենց թեկնածությունը դնել, որն իր հերթին ասպարեզ է թողել, որ առավել երիտասարդ եւ անփորձ կղերականներ առաջադրվեն: Աստված չանի, որ սխալ թեկնածու ընտրվի, քանի որ Երուսաղեմի պատրիարքարանի ճակատագիրն է այդպիսով վտանգվելու:

Ասում են՝ պատերազմը շատ կարեւոր գործ է, որը չպետք է թողնել միայն գեներալների հայեցողությանը: Նույն տրամաբանությամբ կարելի է ասել, որ Երուսաղեմը չափազանց կարեւոր մի կենտրոն է, որի ճակատագիրը չպետք է թողնվի հայեցողությանը 20-30 միաբանական կղերականների, որոնցից ոմանք սխալմամբ են ընտրել հոգեւորականի կոչումը:

Ինչպես տեսնում ենք, մարտահրավերները հսկայական են: Միայն խելամիտ ու շրջահայաց կոնկլավը՝ եկեղեցական գաղտնի ժողովը կարող է, պահի պատմական կարեւորությունը գնահատելով եւ անձնական փառասիրությունից վեր կանգնելով, ընտրել արժանավորին՝ ի շահ պատրիարքարանի հետագա գոյության:

**Դետրոյթ, ԱՄՆ**
**Թարգմ. Հ. Ծ.**

# Հարցազրոյց պատմաբան Ժիրայր Քոչարեանի հետ

**- Վերջին շրջանին, բաւական կարեւոր իրադարձութիւններ տեղի կունենան միացեալ Գերմանիոյ մայրաքաղաք Բեռլինի մէջ, որոնք կը վերաբերին Հայ դատին եւ Հայոց ցեղասպանութեան ճանաչման: Կարո՞ղ էք ներկայացնել զանոնք:**

- Կը ցանկանայի քանի մը խօսք ըսել այսպէս կոչուած հայ-թուրք երկխօսութեան մասին, որ շատ կը հետաքրքրէ Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը: Որովհետեւ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցը շուտով կը մօտենայ եւ իրենք բնաւ նպատակ չունին 2015-ին Ցեղասպանութիւնը որպէս այդպիսին ճանչնալու, դատապարտելու, կը փորձեն հայ-թուրք մակերեսային երկխօսութիւններ կազմակերպել: Այդ տեղի կունենայ յայտնի կազմակերպութիւններու կողմէ, ինչպիսիք են «Նաւման» հաստատութիւնը, «Օյրօ» ակադեմիան, «Անատոլու Քիւլթիւր» (դժբախտաբար Հայաստանի մէջ այդ խայծը կուլ տուած են եւ կու գան մասնակցելու այդ միջոցառումներուն...): Այս բոլորը ֆինանսաւորողը արտաքին գործոց նախարարութիւնն է եւ պարզ է անոնց նպատակը: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներուն՝ Օսմանեան կայսրութեան նահանգներէն եկող լուրերը պէտք է գային Պոլիս, ուր անոնք կը զտուէին, գրաքննութիւն կար: Յետոյ, երիտթուրք ոճրագործները փախցուցին Բեռլին եւ թոյլ չտուին որ յանձնուէին Թուրքիոյ դատարաններուն, ուր դատապարտուած էին այդ ժամանակ, հեռակայ կարգով: Հիմա, Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը կը ֆինանսաւորէ այս եւ նման միջոցառումները: Այնպէս որ, հարկաւոր է նամակներ յղել բոլոր հայ կազմակերպութիւններուն, Սփիւռքի եւ Հայաստանի մէջ, որ հրաժարին այսպիսի ծրագրուած խորհրդաժողովներու մասնակցելէ...

Միաժամանակ, անձամբ երկու ծրագրի վրայ կաշխատիմ այսօր: 1915 թուին ձերբակալուած եւ աքսորուած ու ճանապարհին սպաննուած 15 գրողներու նիւթերը կը հաւաքեմ, Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին տպագրելու համար՝ գերմաներէն լեզուով: Կը պատրաստեմ հայ ազգաբնակչութեան աթլասը, 1978 թուի Բեռլինի վեհաժողովէն մինչեւ այսօր: Թէ ի՞նչ պատահեցաւ, որ այսօր միայն Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախի տարածքներուն վրայ է որ հայեր կապրին: Այդ 15 քարտէզները համապատասխան բացատրութիւններով կուզեմ հրատարակել մինչեւ 2015 թուականը: Միւս կողմէ, մի քանի շաբաթ առաջ Հունգարիոյ դեսպանատան առջեւ բողոքի ցոյց կազմակերպուեցաւ, բողոքի նամակներ յղուեցաւ եւրոպական յանձնաժողովներու՝ բողոքելով ազերի ոճրագործ սպայ Սաֆարովի ազատ արձակման հարցով: Գերմանիոյ մէջ շատ ընելիքներ կան: Թուրքերը շատ կազմակերպուած են հոս եւ հակա-հայկական քարոզչութիւն կը տանին պետական մակարդակով: Թրքական դեսպանատան մէջ կաշխատին յատուկ պաշտօնեաներ այդ ուղղութեամբ...



Միւս կողմէ, Հումպոլտի համալսարանի փողոցին վրայ յուշատախտակ տեղադրուեցաւ Կոմիտասի յիշատակին, ուր ան փիլիսոփայութիւն ուսանած էր: Ողջունելի քայլ էր, սակայն նոյն համալսարանին մէջ ազրպէյճանագիտութեան, լեզուի ու մշակոյթի ամբիոն հիմնած են ազերիները: Նկատի առնելով, որ Բեռլինի «Ֆրայ» համալսարանը միանգամընդմիշտ փակեց հայագիտական ուսումնասիրութիւններու ամբիոնը՝ զայն փոխադրելով Հալէի համալսարան, մտահոգիչ վիճակ ստեղծուած է նաեւ այս առումով: Այսինքն՝ ազրպէյջանցիները կը տեղաւորուին մայրաքաղաքին մէջ, իսկ հայերը... այժմ հրոյ ճարակ դարձած Հալէի մէջ...

Ասիկա «հայկական» ձեւի քաղաքականութիւն տանիլ է: Մանաւանդ որ այս քաղաքին մէջ (Բեռլին) 300-350,000 թուրք կայ: Մեր Հայաստանի հայկական հաստատութիւնը թուրքին ինչ ըլլալը լաւ չի պատկերացներ, որ նենգ ու խորամանկ ոճրագործ մըն է ան: Մանաւանդ այն թուրքերը, որոնք այստեղ ծնած են, անոնք թրքական կառավարութեան երկարացուած ձեռքերն են...

Փառք Տիրոջ, այստեղ ունինք մի քանի գերմանացի բարեկամներ, Ցեղասպանութեան ճանաչման խմբակ՝ Թեսա Հոֆմանի գլխաւորութեամբ, որոնք մեծ աշխատանք կը տանին: Եթէ դրամական օգնութիւն ըլլայ, որքան կարեւոր է Գրիգոր Պալաքեանի «Հայ Գողգոթան» թարգմանուի գերմաներէնի... կամ Սողոմոն Թեհլիրեանի «Իմ յիշողութիւնները», որոնք մեծ ազդեցութիւն պիտի ձգեն գերմանական նոր սերունդին վրայ, որ քննադատաբար կը վերաբերի իր պատմութեան հանդէպ: Տեղացի ժողովուրդին չենք փորձած ծանօթացնել մեր իրողութիւններուն հետ: Այս օրերուն, Թեսա Հոֆման պիտի ներկայացնէ Պոնտոսի եւ Թրակիոյ յոյն ժողովուրդին հանդէպ գործուած Ցեղասպանութիւնը: Թող աշխարհը իմանայ, որ թուրքը ցեղասպանութիւններու շարք գործադրող ոճրագործն է: Պէտք է Պարսկաստանին եւ Ռուսաստանին հասկցնել, թէ ան կը շարունակէ իր պան-թուրքիզմի քաղաքականութիւնը:

Առաջին համաշխարհային պատերազմի աւարտին Բեռլին փախած թուրք ցեղասպան-ոճրագործներ Ջեմալ Ազմին, Բեհաէդդին Շաքիրը, Թալաաթ փաշան շանսատակ եղած էին հայ վրիժառուներու ձեռքով: 1940 թուին Թալաաթի աճիւնը Թուրքիա տեղափոխուեցաւ մե՜ծ շուքով...: Իսկ այստեղի թուրքերը, վերջերս մեծ գումար հաւաքելով, մնացեալ երկու ոճրագործներուն գերեզմանները պատեցին թանկարժէք մարմարով, կողքին կառուցելով շքեղ մզկիթ մը, զոր կոչեցին «Նահատակներու» անունով: Մենք բողոքի նամակ յղեցինք այդ շրջանի քաղաքապետին, բողոքելով ոճրագործներու պաշտամունքի դէմ, բայց մինչեւ այսօր պատասխան չստացանք: Ինչպէ՞ս կըլլար եթէ նացիզմի ռազմական ոճրապետեր Հիթլերն ու Հիմլերը, անհասկ պաշտամունքի առարկայ դառնային այսօր՝ Գերմանիոյ մէջ: Բեռլինը մօտէն կապուած է հայոց պատմութեան տխուր էջերուն հետ:

**ՀԱՄՕ ՄՈՍԿՈՖԵԱՆ**
**Բեռլին, Գերմանիա**

# Երբ Բաքվում ես եւ երբ Բաքվում չես

## Կամ ինչպես Սիմոնյանը դարձավ Բաքվի աբսուրդի զոհ

Սիմոնյանին հանդիպեցինք Սեւ ծովի ափին: «Թուրքական ավիաուղիների» ուղեւորական կտրոններով ճամպրուկը դիմացին, անձնագիրը մի կողմ նետած, Մոսկվայում ծնված, ապրող ու հայերեն ոչ մի բառ չիմացող երիտասարդը նստած էր Բաթումում օրերս բացված վրացական «ազգային օղու»՝ չաչայի շատրվանի դիմաց ու սպասում էր հաջորդ օրվա երեկոյան ժամը յոթին, քանի որ հենց այդ ժամից ամեն օր շատրվանն աշխատում է ու դրանից, դատելով շրջակայքում տարածված բույրից, իսկական չաչա է հոսում, իհարկե՝ որոշ ժամանակով: Թե Բաթումի «գլխավոր դիզայներ» Սաակաշվիլու տեղացի «հարբել սիրողներին» սիրաշահող այս որոշումը որքանով առնչություն ունի Իվանաշվիլու հաղթանակի հետ, դժվար է ասել, բայց որ մարդիկ շշերով են գալիս չաչա տանելու, ու հավանաբար վայելելիս չեն մոռանում նաեւ Սաակաշվիլու կենացը խմելը, թերեւս միանշանակ է...

Սիմոնյանը Բաթում էր եկել թուրքական Անթալիայից, նա ծովային հանգստի սիրահար է, սակայն մի ծով նրա համար անհասանելի է՝ Կասպիցը: «Ես չեմ կարող Հայաստան գալ: Չէ, չէ, Հայաստան չէ, Ադրբեջան չեմ կարող գնալ», ասաց տղան, ամենեւին էլ չզարմանալով մեզ՝ հայ, ադրբեջանցի ու վրացի լրագրողներիս միասին տեսնելիս: Ինչո՞ւ, հարցրեցինք նրան. «Որովհետեւ իմ ազգանունը հայկական է. Սիմոնյան, ինձ Ադրբեջան չեն թողնի....»... Փաստորեն հայ Սիմոնյանի, որ ամուսնացել է «խախլուշկայի հետ», թոռը, ում հայրն էլ իր հերթին «երբեք չի ասում, որ ինքը հայ է», ադրբեջանական աբսուրդի հերթական զոհն է: Ծագումով հայերին հայաբնակ «Ղարաբաղ պահանջող» Ադրբեջան չեն թողնում, հետեւաբար անընդունելի են համարում հայի ու ադրբեջանցու թեկուզ ժամանակավոր համագոյակցությունը:

Մոսկվաբնակ Սիմոնյանին հանդիպեցինք հենց այն օրը՝ երեկոյան, երբ Դոյչե Վելլեի նախաձեռնությամբ Բաթումում սկսվել էր «Զգայական լրագրություն՝ հակամարտության տարածաշրջաններում» միջազգային սեմինարը, որն այս տարի վերնագրված է «Տարածաշրջանային տուրիզմը՝ որպես տարածաշրջանի հակամարտությունները լուծելու միջոց»: Այդ օրվա ընթացքում, նախքան Սիմոնյանին տեսնելը, ադրբեջանցի մեր գործընկերները միաձայն պնդեցին, թե տուրիզմը կարող է այդ միջոցը դառնալ, սակայն ծովի սիրահար Սիմոնյանը փաստորեն ապացուցեց, որ գոնե մեկ տարածաշրջանային երկրի պարագայում դա անհնարին է, քանի որ տուրիզմ որպես այդպիսին այդ երկիրը՝ ծագումով հայերին չի ընդունում, հակառակ պարագայում չի կազմի ու ժամանակ առ ժամանակ չի ընդլայնի իր «սեւ ցուցակը», որում ընդգրկվածները, ինչպես Սիմոնյանը, երբեք չեն տեսնի Կասպից ծովը Ադրբեջանից...

Ի դեպ, երբ Սիմոնյանին հարցրեցինք, թե չի՞ պատրաստվում արդյոք նաեւ Հայաստան գալ, պատասխանեց. «Իսկ ինչո՞ւ գամ, ծով կա՞...»: Ծով կա, իհարկե, պարզապես այնտեղ ջուր չկա...

### «Ճիշտ չէ միակողմանի սուբյեկտիվ լրագրությունը»

Թողնենք հայազգի ռուսախոս Սիմոնյանին չաչայի շատրվանի տակ, մանավանդ որ նա ճիշտ էր նախապատրաստել չաչա լցնելու համար, ու խոսենք ադրբեջանցի լրագրողների մի ուշագրավ առանձնահատկության մասին: Պարզվում է, զգալի տարբերություն կա միեւնույն լրագրողի դիրքորոշումների կամ կարծիքի մեջ՝ կապված նրա հետ, թե տվյալ լրագրողը Բաքվում է, թե՝ Բաքվում չէ: Եթե նա Բաքվում է, ապա կարող է, օրինակ, գրել հետեւյալը. «Նման գարշելի հանցագործությունը բնորոշ է միայն ագրեսոր հայերին»: Մինչդեռ միջազգային սեմինարի ընթացքում, այն էլ, երբ սեմինարավար օտարերկրացիները չեն խրախուսում նման ձեւակերպումները, նույն ադրբեջանցի լրագրողը կարող է ոչ միայն դատապարտել այս ձեւակերպումներով հոդվածները, այլեւ ընդգծել. «Ճիշտ չէ միակողմանի, սուբյեկտիվ լրագրությունը»: Ու նա այն լրագրողն է, որը պարբերաբար ադրբեջանցի հասարակությանը տեղեկացնում է, թե ինչպես «հերթական անգամ ագրեսոր հայերը պարզորեն խախտեցին զինադադարի ռեժիմը՝ ճակատային առաջին գծում», մի նախադասության մեջ որքան ոչ սուբյեկտիվ եւ միակողմանի մոտեցում...

Իհարկե հասկանալ կարելի է. Բաքվում մեր գործընկերները մշտապես գտնվում են «ազերիպրոմի» տիրույթում՝ սրանից բխող բոլոր հետեւանքներով, իսկ երկրից դուրս նրանց խոսքերի մասին հայրենիքում չեն իմանա, հետեւաբար, երբ ադրբեջանցի մի լրագրող հայտարարեց, թե «Ղարաբաղի հարցը արդարացի կլուծվի այն ժամանակ, երբ Ադրբեջանում նավթն ավարտվի», պատասխանատվության չի ենթարկվի, որովհետեւ այս մասին կտեղեկացնեն միայն հայերը, որոնց, «սովորական բան է» մեղադրել «հերթական ստի ու կեղծիքի տարածման» մեջ:

Ի դեպ, ադրբեջանցի գործընկերս, որը մինչ Բաթումի սեմինարը, դեռ Բաքվից ամեն կերպ արդարացնում էր բալթաջի Սաֆարովին, Բաթումում արդեն, երբ սեմինարավար գերմանացիներն էլ իրենց տարակուսանքը հայտնեցին հատկապես Սաֆարովին Բաքվում որպես հերոսի ընդունելուց, ոչինչ չունեցավ ասելու, բացի մի բանից. «Ադրբեջանում այսօր ապրում է շուրջ ութ միլիոն մարդ, ու նրանցից յուրաքանչյուրը յուրովի պատկերացումներ ունի հերոսի ու հերոսության մասին: Ադրբեջանում Սաֆարովը հռչակված հերոս չէ...», չմոռացավ ընդգծել գործընկերս, որը ընդամենը մեկ շաբաթ առաջ համեմատում էր մարդասպան Սաֆարովին ազատամարտիկ, իր իսկ խոսքերով՝ «ոճրագործ» Մոնթե Մելքոնյանի հետ, հետեւաբար համեմատում էր «ազգային հերոսին» ազգային հերոսի հետ...

Սեմինարը դեռ շարունակվում է, եւ մենք կտեղեկացնենք դեռ ադրբեջանական, երբ Բաքվում ես եւ երբ Բաքվում չես, տրամաբանության երկդիմության մասին...

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ
Բաթումի

ԴԱՄԱՍԿՈՍ

# Սիրիան ԱՄՆ-ին մեղադրեց միջազգային ահաբեկիչներին օգնելու մեջ

## ԱՄՆ-ը պնդում է, թե ապստամբների Stinger-ները «սեւ շուկայի» հետեւանք են



**Սիրիայի իշխանությունները երեկ հանդես են եկել հայտարարությամբ, որով մի շարք երկրների մեղադրում են ապստամբներին ռազմական օգնություն ցույց տալու մեջ: Ռուսաստանի ԱԳՆ-ում արձագանքել են, նշելով, որ դա նշանակում է օգնություն միջազգային ահաբեկիչներին: Խոսքը մասնավորապես ապստամբների ձեռքին հայտնված ամերիկյան զենիթահրթիռային համալիրների մասին է, որոնց մատակարարումների առնչությամբ ամերիկացիները խուսափողական պատասխան են տալիս:**

**«Ես չեմ կարող դա հաստատել: Ինչպես գիտեք, Սիրիայում մենք դեսպանություն չունենք», հայտարարել է Սպիտակ տան պաշտոնական ներկայացուցիչ Վիկտորիա Նուլանդը, մամլո ասուլիսում պատասխանելով լրագրողների այն հարցին, թե սիրիացի ապստամբներն ինչպես են ձեռք բերել Stinger շարժական զենիթահրթիռային համալիրներ:**

**ՌԴ արտգործնախարարությունը ԱՄՆ-ին փաստորեն մեղադրել է Սիրիայում կռվող ահաբեկիչներին զինելու մեջ: ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Ալեքսանդր Լուկաշեւիչի խոսքերով, «լրագրողները վկայակոչում են սիրիական լավատեղյակ աղբյուր, ըստ որի ԱՄՆ-ը որոշել է սիրիացի գրոհայիններին հանձնել շարժական զենիթահրթիռային համալիրների մի խմբաքանակ»: Դիվանագետը նշել է, որ այդ տեղեկությունը դեռ հաստատված չէ, բայց հիշեցրել է քաղաքացիական օդանավեր խփելու ապստամբների սպառնալիքը: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:**

**Լուկաշեւիչը ընդգծել է, որ սիրիացի գրոհայիններին նման «ահարկու» զենք հանձնելը կամ նման գործողություններ թույլատրելը կլինեն «անչափ վտանգավոր քայլ» եւ «փաստորեն կնշանակի միջազգային ահաբեկիչների սպառազինում»:**

**Անցյալում «Նյու Յորք թայմսը» գրել է, որ սիրիացի ապստամբները ռազմական եւ ֆինանսական օգնություն են ստանում Քաթարից եւ Սաուդյան Արաբիայից, ինչպես նաեւ Թուրքիայից: Դամասկոսը երեկվա հայտարարության մեջ նշել է նաեւ այդ երկրների անունները: Փաստաթուղթն ուղարկվել է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարին եւ Անվտանգության խորհրդին:**

**Ինչ վերաբերում է ամերիկյան Stinger-ներին, Վաշինգտոնում նախընտրում են խուսափողական պատասխան տալ եւ զանազան զինված կազմավորումներում դրանց առկայությունը համարելով «սեւ շուկայի» գործարքների հետեւանք: «Մենք արդեն ասել ենք, որ շատ մտահոգված ենք ամբողջ աշխարհում նման զինատեսակների շրջանառությունից: Մենք աշխատում ենք տարբեր երկրների կառավարությունների հետ՝ փորձելով շրջանառությունից հանել շարժական զենիթահրթիռային համալիրները», հայտարարել է Նուլանդը:**

# Իրաքը խոչընդոտ է հարուցում Մեքքա մեկնող թուրք ուխտագնացներին

**Սիրիայի նկատմամբ Թուրքիայի թշնամական քաղաքականությունն անխուսափելիորեն անդրադառնալու էր Իրաքի հետ վերջինի հարաբերություններին: Սակայն ոչ ոք չէր կարող ենթադրել, որ հարաբերությունների վատթարացումը Մեքքա ուխտագնացության մեկնելու հնարավորությունից կզրկի Թուրքիայի քաղաքացիներին:**

**Հասկանալի է, որ թուրքերը Իրաքի սահմանին ստանում են «Քուրդիստան» շրջանի վիզան, որն այնուհետեւ անվավեր է ճանաչվում վարչապետ Նուրի ալ Մալիքիի կառավարությունը: Այսպիսով, թուրք ուխտագնացների քարավանների առաջխաղացումը կասեցվում է մինչեւ Բաղդադ՝ Քերբելայում, Սալահադդինում եւ Բաբելոնում:**

**Ըստ «Հաբերթուրքի», Իրաքի սահմանապահ ծառայությունները հաճախ առգրավում են թուրք ուխտագնացների անձնագրերը, ձեւակերպումների պատրվակով օրեր շարունակ պահում այս վայրերում, ապա արտաքսում են երկրից:**

**Խնդիրը, սակայն, սոսկ ուխտագնացները չեն, այլ «Ղուրբան բայրամի» առնչությամբ, որը նշանակում է մատաղի տոն, Սաուդյան Արաբիա գործուղվող մսագործներն են, ինչպես նաեւ ուխտագնացներին սպասարկելու համար Մեքքա ուղարկվող ավտոբուսները: Ընդ որում վերջիններս Սաուդյան Արաբիա են մեկնել Իսլամական զարգացման բանկի նախաձեռնությամբ:**

**Համենայն դեպս, «Հաբերթուրքի» տվյալներով, երեք օր առաջ 81 ավտոբուսով Հյուսիսային Իրաք մուտք գործած 2700 մսագործի, ինչպես նաեւ 400 ավտոբուսի առաջխաղացումը կասեցվել է Քերբելայում, առեւանգվել են վարորդների անձնագրերն ու նրանց ձերբակալել:**

**Ինչ վերաբերում է ուխտագնացներին, ապա նույն ճակատագրին է արժանացել նաեւ 1200 ուխտագնաց: Ձերբակալվածներից 500-ին երկու օր պահելուց հետո թույլատրել են շարժվել Թուրքիայի սահմանի ուղղությամբ: Ի դեպ, «Հաբերթուրքը» նշում է, որ Սիրիայի հետ առաջացած ճգնաժամի պատճառով ուխտագնացներն այս տարի Մեքքա էին մեկնում Իրաքով:**

Հ. Չ.

# «Ալ Ղաիդայի» հարձակում եմենյան ռազմակայանի վրա

Արաբական թերակղզում գործող «Ալ Ղաիդայի» մասնաճյուղի գրոհայինները երեկ առավոտյան Եմենի հարավում հարձակվել են բանակի ռազմակայանի վրա: Ֆրանսպրեսը հաղորդում է, որ մահապարտ վարորդը ականված ավտոմեքենան է պայթեցրել Աբյանի նահանգում գտնվող ռազմակայանում: Սպանվել է առնվազն 9 զինվոր: Հարձակվող գրոհայիններից երկուսը սպանվել են, մեկին հաջողվել է փախչել: Ռոյթեր գործակալության տվյալներով, սպանվել են 10 զինծառայող եւ 11 ենթադրյալ գրոհային: Հարձակումից առաջ զինված եւ մահապարտի գոտի կրող գրոհայինները անցել էին մի քանի պահակակետի մոտով:



Երեկվա հարձակումը հավանաբար վրեժխնդրության գործողություն էր նախօրեին «Ալ Ղաիդայի» տեղական առաջնորդներից մեկի սպանության դիմաց. բանակի հրթիռակոծության եւ անօդաչու ինքնաթիռի գնդակոծության հետեւանքով սպանվել էր առնվազն յոթ գրոհային:

2011-ին «Ալ Ղաիդայի» գրոհայինները Եմենի հարավում տարածքներ էին գրավել՝ օգտվելով երկրի քաղաքական ճգնաժամից, որը հանգեցրեց նախագահ Ալի Աբդուլլահ Սալեհի պաշտոնանկությանը:

2012-ի մայիսից եմենցի զինվորականները ԱՄՆ-ի աջակցությամբ ահաբեկիչների ոչնչացման լայնածավալ գործողություն են սկսել:

# «Երգը բարեկամության կամուրջ է»



Ռուսաստանի հայերի միության եւ Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի նախաձեռնությամբ, «Русский мир» (Ռուսաստանի Դաշնություն) հիմնադրամի մասնակի ֆինանսավորմամբ սեպտեմբերի 1-ից դեկտեմբերի 31-ը Հայաստանի հանրակրթական բոլոր դպրոցներում անց է կացվում «Երգը բարեկամության կամուրջ է» ռուսական երգի հանրապետական երկրորդ փառատոնը:

Փառատոնի նպատակն է Հայաստանի դպրոցականներին հաղորդակից դարձնել ռուս ժողովրդի մշակութային եւ հոգեւոր արժեքներին, նպաստել Ռուսաստանի, ռուսական մշակույթի եւ ռուսաց լեզվի նկատմամբ նրանց հետաքրքրության բարձրացմանը, ինչպես նաեւ Հայաստանի ռազմավարական գործընկերոջ` Ռուսաստանի նկատմամբ ստեղծված բարենպաստ հասարակական կարծիքի պահպանմանն ու հետագա խորացմանը:

Ռուսաց լեզվի զարգացման հայկական կենտրոնի նախագահի, Ռուսաստանի հայերի միության փոխնախագահի Վլադիմիր Աղայանի հավաստմամբ` «Առաջին փառատոնն անցկացվել է 2010 թվականին, հանրապետության 1400 դպրոցներից 1300 հանրակրթական դպրոցի աշակերտ անմիջական մասնակցություն է ունեցել կազմակերպված միջոցառումներին ու մրցույթներին, ընդհանուր հաշվով` 400 հազար դպրոցական ընդգրկված է եղել ծրագրում, իսկ մեկ միլիոն մարդ ուղղակի կամ անուղղակի առնչվել է փառատոնին: Փառատոնի հաջողությամբ էր պայմանավորված նաեւ այն փաստը, որ մանկավարժների, ծնողների ու աշակերտների առաջարկով ծրագիրը դարձավ ավանդական»:

Սեպտեմբերի 1-ից հոկտեմբերի 31-ը հանրակրթական բոլոր դպրոցներում անցկացվում են ռուսական մշակույթի եւ ռուսաց լեզվի օրեր, որի շրջանակում կազմակերպվում են ռուսական պոեզիայի երեկոներ, գրական-երաժշտական կոմպոզիցիաներ, ռուսաց լեզվի բաց դասեր, լեզվի վարպետության դասեր եւ ռուսական երգի լավագույն կատարման մրցույթ: Ռուսական երգի լավագույն կատարման մրցույթի համար կազմկոմիտեի կողմից առանձնացվել է հինգ անվանակարգ` ռուսական ժողովրդական երգի, ռուսական հայրենասիրական երգի, ռուսական ռոմանսի, ռուսական էստրադային երգի եւ հայկական երգ ռուսերեն լեզվով լավագույն կատարումներ:

Մրցույթի արդյունքներով ձեւավորվում է հաղթողների դպրոցական թիմը` մարզային փուլին մասնակցելու համար: Յուրաքանչյուր դպրոցական թիմում կարող է ընդգրկվել հինգ հաղթող` յուրաքանչյուր ժանրում մեկական կատարող:

Նոյեմբերի 1-ից 30-ը Երեւանում եւ մարզկենտրոններում կիրականացվի ծրագրի երկրորդ փուլը: Այս փուլում կատարողի գնահատման չափանիշ կդիտվի նաեւ ռուսերեն բառերի ճիշտ արտասանությունը, երգի հեղինակների, երգի ստեղծման պատմության մասին կատարողի իրազեկվածությունը:

Եզրափակիչ փուլը տեղի կունենա Երեւանում դեկտեմբերի 17-ին` Առնո Բաբաջանյանի անվան համերգային դահլիճում, իսկ գալա-համերգը տեղի կունենա դեկտեմբերի 20-ին «Արամ Խաչատրյան» համերգասրահում:








Փառատոնն իրականացվում է ՀՀ կրթության եւ գիտության նախարարության, ՀՀ մշակույթի նախարարության, Երեւանի քաղաքապետարանի, տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի կոմպոզիտորների եւ երաժշտագետների միության աջակցությամբ:

Հանրապետության դպրոցներում երկու ամիս է, ինչ մշակութային եռուզեռ է, կազմակերպվող բաց դասերն ու բանավեճերը, ասմունքի ու երգի մրցույթները դպրոցականների համար ինքնադրսեւորվելու, իրենց կարողությունները ցուցադրելու լավ հնարավորություն են: Երեւանի Դանիել Վարուժանի անվան թիվ 89 դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի Արինե Մխիթարյանը ոգեւորված պատմում է, որ իրենք հայկական եւ ռուսական մշակույթի զուգահեռներ են անցկացնում` «համեմատելով մենք ավելի ենք սիրում ու տեղեկացվում մեր պատմությանը, բայց նաեւ հետաքրքիր է ռուսական մշակույթին ծանոթանալը»:

Օրերս Արմավիր քաղաքի Անդրանիկ Օզանյանի անվան թիվ 5 հիմնական դպրոցում «Հայ-ռուսական բարեկամություն» խորագրի ներքո տեղի ունեցան լայնածավալ միջոցառումներ: Կրտսեր դպրոցականների մասնակցությամբ դպրոցի բակում կազմակերպվեց կավճանկարչություն եւ փոքրիկ նկարիչների մրցույթ: Երկրորդ օրը կրթօջախը հյուրընկալեց Ռուսաստանի հայերի միության եւ Համաշխարհային հայկական կոնգրեսի նախագահ Արա Աբրահամյանին, մարզպետ Աշոտ Ղահրամանյանին, մեծ թվով բարձրաստիճան պաշտոնյաների, ոլորտի պատասխանատուների: Նույն օրը տեղի ունեցավ դպրոցի սաների ձեռքի աշխատանքների ցուցահանդեսի բացումը: Օրը նշանավորվեց նաեւ Արա Աբրահամյանի կողմից դպրոցին նվիրաբերված համակարգչային տեխնիկայով հագեցված դասասենյակի բացմամբ: Տոնական տրամադրությունն ամբողջացնելով` կրթօջախի սաները հյուրերին զարմացրեցին իրենց ռուսական երգի բազմաժանր կատարողականով, ռուսերեն լեզվի իմացությամբ ու կազմակերպվածությամբ:

Տավուշի մարզի Հաղարծին գյուղի դպրոցի աշակերտներն առանձնացան իրենց հատուկ անկեղծությամբ ու հայ-ռուսական բարեկամության, մշակութային ժառանգության ու ավանդույթների իմացությամբ:

Արարատի մարզի Վերին Դվին գյուղի դպրոցի աշակերտները ռուս դասականներ Մ. Շոլոխովի եւ Մ. Լերմոնտովի ստեղծագործություններից բեմադրեցին հատվածներ: Հետաքրքիր էր այն փաստը, որ ազգությամբ հայ, ռուս եւ ասորի դպրոցականների մասնակցությամբ տեղի ունեցավ բարեկամության երկխոսություն ռուսերեն լեզվով, ինչպես նաեւ ազգամիջյան հարաբերությունների բարելավմանն ու համագործակցությանը ուղղված կոչ հնչեց:

Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքի Մեսրոպ Մաշտոցի անվան ավագ դպրոցն էլ յուրօրինակ հաշվետվություն ներկայացրեց հանրությանը: Դպրոցում կազմակերպվել էր ռուսերեն լեզվով շարադրության եւ պատի թերթի մրցույթ, որոնց հիմքում Հայաստան-Ռուսաստան բարեկամությունն էր, մշակութային ու ինտելեկտուալ մրցույթներից զատ, դպրոցականները ցուցադրեցին իրենց ձեռքով պատրաստված փայտե բարեկամության կամուրջը:

Երեւան քաղաքի թիվ 31 դպրոցն էլ Շենգավիթ համայնքի բարեկարգված «Շողակաթ» զբոսայգում կազմակերպել էր «Աշնանային հեքիաթ» ցերեկույթը, որը համայնքի բնակչությանը հնարավորություն ընձեռեց ականատես լինել ոգեւորված դպրոցականների ռուսական ժողովրդական հեքիաթների բեմականացմանը: Հեքիաթների դրական եւ բացասական հերոսներն իրենց ռուսերենի լավագույն իմացությունը, դերասանական տաղանդը, երգելու եւ ասմունքելու ձիրքը հասու դարձրեցին ներկաներին:

Գյումրու թիվ 45 դպրոցն էլ հայրենասիրական դաստիարակությանն ուղղված, միջմշակութային կապերի ամրապնդման յուրօրինակ բաց դաս էր կազմակերպել Պատվո Բլուր զինվորական հուշահամալիրում, որտեղ դպրոցականներն ու ուսուցիչները, պաշտոնատար անձինք եւ հրավիրյալներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին 1853-56 թթ. եւ 1877-78 թթ. ռուս-թուրքական պատերազմներում զոհված ռուսական բանակի զինվորականների հիշատակին:





Հայաստան-Ռուսաստան դարավոր բարեկամությունը բազմաթիվ թելերով կապված է միմյանց, հանրակրթական դպրոցներում կազմակերպվող միջոցառումները նպաստում են պատմության վերհիշմանը, մշակութային ժառանգության պահպանմանը, միջմշակութային երկխոսությանը եւ համատեղ ծրագրերի իրականացմանը:

**ԱՍՏՂԻԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ**

# «Տաշիր» բարեգործական հիմնադրամն առաջինը պարգեւատրեց օլիմպիադայի մրցանակակիրներին


ՖՈՏՈԼՈՒՐ

Երեկ տոնական մթնոլորտ էր տիրում «La Piazza» ռեստորանային համալիրում, որտեղ տեղի ունեցավ Լոնդոնի օլիմպիադայի հայ մրցանակակիրների եւ նրանց անձնական մարզիչների պարգեւատրման արարողությունը: Միջոցառումը կազմակերպել էր հայտնի գործարար Սամվել Կարապետյանի հիմնած «Տաշիր» բարեգործական հիմնադրամը:

Բացման խոսքով ներկաներին դիմեց ՀՀ ԱԺ պատգամավոր Կարեն Կարապետյանի գրասենյակի ղեկավար **Արտակ Ճաղարյանը**. «Կարապետյան եղբայրների հիմնադրած «Տաշիր» բարեգործական հիմնադրամը մշտապես իր ուշադրության կենտրոնում է պահել ոչ միայն օլիմպիական խաղերում, այլեւ միջազգային խոշոր այլ մրցաշարերում հաջողության հասած մեր մարզիկներին՝ պարգեւատրելով նրանց նվաճումների համար: Դեռեւս մինչեւ օլիմպիադայի մեկնարկը, հունիսին «Տաշիր» բարեգործական հիմնադրամը հայտարարել էր, որ դրամական պարգեւներ է հանձնելու Լոնդոնում մեդալներ նվաճած մեր մարզիկներին: Անկեղծ ասած, մենք ավելի շատ մեդալներ էինք ակնկալում: Կարապետյանների անունից շնորհավորում եմ մեր օլիմպիական մրցանակակիրներին, մաղթում նրանց նորանոր հաջողություններ մարզական ասպարեզում եւ անձնական կյանքում: Ցանկանում եմ առանձին շնորհավորել Հռիփսիմե Խուրշուդյանին երեկ տեղի ունեցած պսակադրության առիթով: Բոլորիս անունից մաղթենք նրան երջանկություն անձնական կյանքում: Հույս ունեմ, որ որոշ ընդմիջումից հետո Հռիփսիմեն կրկին մրցահարթակ դուրս կգա ու իր հաջող մրցելույթներով կուրախացնի բոլորիս: Ուզում եմ հավատալ, որ հաջորդ օլիմպիադայում կհնչի նաեւ Հայաստանի օրհներգը»:

Արտակ Ճաղարյանը 25 հազար դոլարին համարժեք դրամով պարգեւատրեց Լոնդոնի օլիմպիադայի արծաթե մեդալակիր Արսեն Ջուլֆալակյանին, 15 հազարական դոլարին համարժեք դրամ ստացան բրոնզե մեդալակիրներ Հռիփսիմե Խուրշուդյանն ու Արթուր Ալեքսանյանը:

«Տաշիր» բարեգործական հիմնադրամն ըստ արժանվույն գնահատեց նաեւ մարզիկների անձնական մարզիչների աշխատանքը՝ պարգեւատրելով նրանց մեկական մլն դրամով: Պարգեւատրվեցին Ջուլֆալակյանի անձնական մարզիչ Սամվել Գեւորգյանը, Հռիփսիմեի անձնական մարզիչ Արման Ղազարյանը եւ Արթուրի անձնական մարզիչ Գեւորգ Ալեքսանյանը, որն ըմբիշի հայրն է: Պարգեւատրման արարողությունից հետո իրենց շնորհակալական խոսքն ասացին մեր օլիմպիականները:

**Հռիփսիմե Խուրշուդյան** - Շնորհակալ եմ «Տաշիր» բարեգործական հիմնադրամից, որ մեր մարզիկներին այսպիսի ջերմ վերաբերմունքի է արժանացնում: Մարզիկների համար դա շատ կարեւոր է: Շնորհակալ եմ նաեւ պսակադրության առթիվ ինձ հղած բարեմաղթանքների համար: Ինչ խոսք, նման միջոցառումները նոր լիցք են հաղորդում մեզ եւ նորանոր նվաճումների մղում: Թեեւ իմ կյանքում նոր փուլ է սկսվում, սակայն բնավ էլ մտադիր չեմ թողնելու ծանրամարտը: Մեկ տարի կընդմիջեմ ելույթներս, որից հետո կրկին կվերսկսեմ մարզումները, որպեսզի մրցահարթակ վերադառնամ ու շարունակեմ ուրախացնել մարզասերներին:

**Արսեն Ջուլֆալակյան** - Յուրաքանչյուր բնագավառում էլ, երբ լավ գործ է կատարվում, չպետք է այն աննկատ մնա: Շատ հաճելի է այսօրվա այս արարողությունը: Կրկնակի հաճելի է, երբ օլիմպիադայի ավարտից հետո առաջինը «Տաշիր» բարեգործական հիմնադրամը կատարեց մրցանակակիրների պարգեւատրումը: Դրա համար շատ շնորհակալ եմ Կարապետյանների ընտանիքից: Միշտ էլ հաճելի է գնահատված լինելը, դա քեզ ոգեւորում է, ստիպում աշխատել կրկնակի եռանդով:

Օլիմպիական խաղերից հետո մարզիկների մոտ հարաբերական անդորր է, թեեւ մարզումները շարունակվում են: Ես պայմանագիր ունեմ գերմանական ակումբի հետ եւ մասնակցում եմ բունդեսլիգայի առաջնությանը: Գրեթե ամեն շաբաթ պրոֆեսիոնալ գոտեմարտեր եմ անցկացնելու մինչեւ հունվար: Իսկ հունվարից կմիանամ հավաքականի իմ թիմակիցներին ու կնախապատրաստվեմ նոր մրցաշրջանին:

**Արթուր Ալեքսանյան** - Շատ շնորհակալ եմ «Տաշիր» բարեգործական հիմնադրամից նման միջոցառման համար: Մենք մեզ լավ ենք զգում, երբ կատարված աշխատանքը գնահատվում է: Արդեն նոյեմբերին կրկին մրցագորգ դուրս կգամ՝ Հայաստանի երիտասարդական հավաքականի կազմում մասնակցելու Մոսկվայում կայանալիք Եվրոպայի գավաթի թիմային խաղարկությանը: Դրանից հետո կսկսվեն ուսումնամարզական հավաքները: Կարեւոր է լավ մարզավիճակով դիմավորել նոր մրցաշրջանը, որը հագեցած է լինելու միջազգային խոշորագույն մրցումներով:

# Ֆետելը հավանաբար տեղափոխվի «Ֆերարի»




«Ֆորմուլա-1» դասի ավտոմրցավազքի «Ռեդ Բուլ» թիմի անդամ, գերմանացի ավտոմրցարշավորդ Սեբաստիան Ֆետելը նախնական պայմանագիր է կնքել «Ֆերարիի» հետ, որի համաձայն, 2014-ից պետք է հանդես գա այդ ակումբի կազմում: Նա «Ֆերարիում» կփոխարինի բրազիլացի Ֆելիպե Մասային, որը վերջին տարիներին անհաջող ելույթներ է ունենում: Ֆետելի տեղափոխմանը կողմ է «Ֆերարիի» առաջատար Ֆեռնանդո Ալոնսոն: Վերջինս այս տարի դեմ էր արտահայտվել «Մակլարենում» իր նախկին թիմակից Լուիս Հեմիլտոնի «Ֆերարի» տեղափոխվելու ցանկությանը: Մերժում ստանալով, բրիտանացի ավտոմրցարշավորդը հայտնվեց «Մերսեդեսում», որտեղ 3 տարվա ելույթների համար 60 մլն ֆունտ ստեռլինգ կստանա: Իսկ Ալոնսոյի պայմանագրի ժամկետը «Ֆերարիի» հետ ավարտվում է 2016-ին:

Բնականաբար, Ֆետելն ու «Ռեդ Բուլը» հերքում են նախնական պայմանագրի ստորագրման մասին լուրը: Ըստ նրանց, Ֆետելը մինչեւ 2014-ի ավարտը հանդես կգա «Ռեդ Բուլում» եւ միայն պայմանագրի ժամկետի ավարտից հետո այլ թիմ կտեղափոխվի:

Հատկանշական է, որ ընթացիկ մրցաշրջանում հենց Ֆետելն ու Ալոնսոն են պայքարում աշխարհի չեմպիոնի տիտղոսի համար: Հարավային Կորեայի Գրան պրիի խաղարկությունում տոնած հաղթանակի շնորհիվ, որը 3-րդ անընդմեջն էր, Ֆետելը շրջանցեց Ալոնսոյին եւ գլխավորեց աղյուսակը:

Իսկ ահա Ֆելիպե Մասայի հետագա ճակատագիրը դեռեւս հայտնի չէ: Թիմից նրա հեռանալու մասին առաջին տարին չէ, որ խոսում են: Վերջին երկու փուլերում նա վատ հանդես չեկավ: Ճապոնիայում Մասան 2-րդ տեղը գրավեց, իսկ Հարավային Կորեայում 4-րդն էր:

Եթե Ֆետելը իրոք տեղափոխվի «Ֆերարի», ապա թիմի կազմը շատ ուժեղ կլինի: Ալոնսոն աշխարհի չեմպիոնի տիտղոսը նվաճել է 2005 եւ 2006-ին, իսկ Ֆետելը ուժեղագույնն է ճանաչվել 2010-ին եւ 2011-ին:

ԹԵՆԻՍ

# Ամիրաղյանը դուրս մնաց պայքարից

**Իսրայելում ընթացող թենիսի մրցաշարում Անի Ամիրաղյանին չհաջողվեց հաղթահարել քառորդ եզրափակիչի արգելքը: Լեհ Օլգա Բրոզդայի հետ մրցավեճում Անին հաջող անցկացրեց առաջին խաղափուլը՝ հաղթելով 6-2 հաշվով: Սակայն հաջորդ 2 խաղափուլերում հայ թենիսիստուհին պարտվեց (4-6, 3-6) ու դուրս մնաց հետագա պայքարից:**

# Միակ պարտությունը ճակատագրական էր Գրիգորյանի համար

**Ջակարտայում անցկացված շախմատի մրցաշարում Հայաստանը ներկայացրեց գրոսմայստեր Ավետիք Գրիգորյանը: Նա 103 մասնակիցների մեջ զբաղեցրեց 10-րդ տեղը՝ 9 հնարավորից վաստակելով 6 միավոր:**

**Գրիգորյանը 3 անընդմեջ հաղթանակով սկսեց մրցաշարը՝ պարտության մատնելով ինդոնեզացիներ Շարիֆ Մահմուդին եւ Ավամ Վահոնոյին ու ֆիլիպինցի Ռիչարդ Բիտոնին: Այնուհետեւ նա հաշտություն կնքեց Դմիտրի Բոչարովի, Սուրիա Գանգուլիի եւ Նգոս Նգուենի հետ եւ հաղթեց Օլեգ Կոռնեեւին:**

**Հայ շախմատիստի համար ճակատագրական եղավ 8-րդ տուրում Լի Չաոյից կրած պարտությունը: Ավարտական տուրում Գրիգորյանը ոչ-ոքի խաղաց Լոու Յիպինգի հետ:**

**Հաղթող ճանաչվեց չին գրոսմայստեր Յու Յանգին, որը վաստակեց 7,5 միավոր:**

# «Սպարտակին» պարտադրել են մարել Մկոյանի պարտքը

**Ռուսաստանի ֆուտբոլային միության վեճերի լուծման կոմիտեն պարտադրել է Նալչիկի «Սպարտակին» 30 օրվա ընթացքում մարել Հրայր Մկոյանի պարտքը: Վերջինս այս տարվա սկզբին պայմանագիր էր կնքել «Սպարտակի» հետ, որում նշված էր, որ պրեմիեր լիգայից թիմի դուրս մնալու դեպքում Մկոյանը կարող է հեռանալ ակումբից ազատ ֆուտբոլիստի կարգավիճակով:**

**6 ամսվա ընթացքում Մկոյանը շատ հազվադեպ հանդես եկավ թիմի հիմնական կազմում, իսկ վերջին մի քանի ամսվա աշխատավարձը չէր ստացել: Նա այդ հարցով դիմել էր Ռուսաստանի ֆուտբոլային միությանը, որն էլ իրավացի համարելով հայ ֆուտբոլիստի պահանջը, պարտադրել է «Սպարտակին» վճարել պարտքը:**

# «Ռեալը» պատրաստ է Ֆալկաոյի համար 55 մլն եվրո վճարել

**Մադրիդի «Ռեալը» մտադիր է ամռանը թիմ հրավիրել «Ատլետիկոյի» կոլումբիացի հարձակվող Ռադամել Ֆալկաոյին: Նրա դիմաց արքայական ակումբը պատրաստ է 55 մլն եվրո վճարել: Թիմի գլխավոր մարզիչ Ժոզե Մոուրինյուն կողմ է այդ գործարքի կնքմանը: Դեռեւս սեպտեմբերին «Ռեալի» ղեկավարությունը պատրաստ էր Ֆալկաոյի դիմաց 60 մլն եվրո վճարել:**

**«Ռեալի» ներկայացուցիչներն արդեն նախնական բանակցություններ են վարել Ֆալկաոյի գործակալ Ժորժե Մենդեշի հետ, որը նշել է, որ ֆուտբոլիստն ամենայն հավանականությամբ 2013-ի ամռանը կլքի «Ատլետիկոն»: Doyen Group ներդրումային հիմնադրամը, որին է պատկանում Ֆալկաոյի տրանսֆերային իրավունքների 50 տոկոսը, եւս ցանկանում է հաջորդ տարվա ամռանը վաճառել ֆուտբոլիստին: Սակայն «Ատլետիկոյի» ղեկավարությունը պնդում է, որ Ֆալկաոյի տրանսֆերային իրավունքը պատկանում է միայն իրեն:**

**Ֆալկաոյին գնելու «Ռեալի» ցանկությունը մի փոքր տարօրինակ է, քանի որ 2 ակումբների միջեւ ներքին համաձայնություն կա միմյանց ֆուտբոլիստներին չհրավիրել թիմ: Ենթադրվում է, որ Ֆալկաոյի նկատմամբ «Ռեալի» հետաքրքրասիրությունը պարզապես խորամանկ մի քայլ է ֆուտբոլիստի գինը բարձրացնելու համար: Չէ՞ որ իր կազմում Ֆալկաոյին տեսնելու ցանկություն ունեն նաեւ Լոնդոնի «Չելսին», «Մանչեսթր Սիթին», ՊՍԺ-ն եւ «Անժին»:**

**Բացի Ֆալկաոյից, Ժոզե Մոուրինյուն հույս ունի արդեն ձմռանը թիմ հրավիրել Դորտմունդի «Բորուսիայի» պաշտպան Լուկաշ Պիշչեկին: Դեռեւս անցած մրցաշրջանում էր «Ռեալը» հետաքրքրվում լեհ ֆուտբոլիստով, սակայն «Բորուսիան» մերժել էր առաջարկը: Այժմ «Ռեալը» պատրաստ է նրա դիմաց 10 մլն եվրո վճարել:**

# Բալակը հրաժեշտ է տալիս ֆուտբոլին



**Ֆուտբոլի Գերմանիայի ազգային հավաքականի նախկին ավագ Միխայել Բալակը հայտարարել է մեծ ֆուտբոլին հրաժեշտ տալու մասին: 36-ամյա Բալակը մտադիր է մասնակցել մարզչական դասընթացների ու մարզչի արտոնագիր ստանալ: Միխայել Բալակը պրոֆեսիոնալ ֆուտբոլիստի կարիերան սկսել է 1995-ին՝ հանդես գալով «Կեմնիցեր» թիմում: Այնուհետեւ նա տեղափոխվել է «Կայզերսլաուտերն», որի կազմում անցկացրել է 46 հանդիպում:**

**Բալակը ֆուտբոլասերներին առավել հայտնի դարձավ Լեւերկուզենի «Բայերում» հանդես գալիս, որի կազմում անցկացրեց 3 մրցաշրջան: Իսկ արդեն Մյունխենի «Բավարիայում» Բալակն իրեն դրսեւորեց որպես համաշխարհային ֆուտբոլի «աստղ»: Թիմի կազմում անցկացրած 100-ից ավելի հանդիպումներում նա 44 գոլի հեղինակ է դարձել:**

**2006-ի աշխարհի առաջնությունից հետո Բալակը տեղափոխվեց «Չելսի»: Սակայն ակումբի ղեկավարության հետ ունեցած տարաձայնությունների պատճառով նա 2010-ին վերադարձավ «Բայեր»: Այստեղ նրա բախտը չբերեց: Ստացած ծանր վնասվածքը նրան գործնականում զրկեց ֆուտբոլ խաղալուց:**

**Բալակը հաջողությամբ հանդես է եկել նաեւ Գերմանիայի ազգային հավաքականում, երկար տարիներ եղել է ավագը: Հավաքականի կազմում էլ նա արդյունավետ խաղ է ցուցադրել՝ 98 հանդիպումներում խփելով 42 գոլ:**

*Էջը պատրաստեց* ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ Օրվա հետքերով

ԳՅՈՒՄՐԻ

# Երկու տարբեր արձագանք «Մուշ-2» թաղամասի նորակառույցներից

Ինչպես տեղեկացվել է, հոկտեմբերի 15-ին Գյումրիում երկրաշարժից անօթեւան ընտանիքներին հանձնվեց 38 նորակառույց բազմաբնակարան շենք: Դրանցից հինգը «Անի» թաղամասում են, 33-ը՝ «Մուշ-2»-ում: «Շիրակ կենտրոն» հասարակական կազմակերպության կայքէջում հոկտեմբերի 16-ին հրապարակվել է «Մուշ-2 թաղամասի մի խումբ բնակիչների անունից» գյումրեցի Գեղեցիկ Հարությունյանի շնորհակալական նամակը: Նրանում ասվում է. «Երեկ մեծ ուրախություն ապրեցինք. գյումրեցի բազմաթիվ ընտանիքներով այսքան տարի հետո վերջապես տան տեր դարձանք: Շատ գեղեցիկ ու բարեկարգ թաղամաս է մեր «Մուշ-2»-ը՝ հարմարավետ շենքերով, կանաչապատ, բարեկարգ բակերով: Էն «պզտիկներու» համար էլ անգամ կարուսելներ ու խաղահրապարակներ են կառուցված: Ասֆալտապատ փողոցների վրա հետիոտնի գծերն էլ են գծված: Չգիտենք՝ վերջին անգամ էլ երբ է Հայաստանում այսպիսի թաղամաս հանձնվել: Բնակարաններում տեղադրվել են գազօջախներ, լվացարաններ, սանտեխնիկա ու գազի կաթսա...

Ճիշտ է, երկար սպասեցինք սեփական տանիք ունենալու համար, բայց երբ տեսնում ես, թե ինչպիսի թաղամասում ու բնակարանում պետք է ապրես՝ հոգիդ լցվում է ուրախությամբ, մեծ ոգեւորություն ես ապրում...

Մեր երախտագիտությունն ենք ուզում հայտնել հանրապետության նախագահին, որ իր խոսքը գործ դարձրեց, որ այսօր 1756 ընտանիք վերջնականապես իր վրայից «գցեց» անօթեւանի կարգավիճակը»:

Գեղեցիկ Հարությունյանը «Մուշ-2»-ի 69-րդ շենքի բնակիչ է: Իսկ ահա ԳԱԼԱ հեռուստատեսությանը, վերջինիս հաջորդ իսկ օրվա վկայությամբ, նորակառույց թաղամասի բնակիչները դժգոհություններ են հայտնել որ, օրինակ, որոշ բնակարաններում խոստացված ջեռուցման կաթսայի փոխարեն «արկղերում դրված են եղել» ջրատաքացուցիչներ: Եվ հիմա բնակիչները կանգնել են խնդրի առաջ՝ չիմանալով, թե ինչպես պետք է ջեռուցեն բնակարանները: Նրանք կարող են բնակարանում միայն տաք ջուր ունենալ, իսկ ջեռուցման խնդիրը կմնա առկախ, քանի որ «մի շարք բնակարաններ չեն ստացել խոստացված ջեռուցման սարքերը»: Ըստ ԳԱԼԱ-ի, այս խնդրի առաջ են կանգնած «Մուշ-2» թաղամասի այդ նույն... (զարմանալի զուգադիպություն) 69-րդ շենքի բոլոր բնակիչները:

Նորակառույցների դրականն ու թերին, որոնց ծանոթանալու առիթներ դեռ կունենանք, ամբողջովին կերեւան շենքերի բնակեցման ու շահագործման ընթացքում: Անշուշտ, չի կարող այնպես լինել, որ հանձնված միանգամից այդքան թվով նոր բնակարաններում շինարարական թերություններ, պակասություններ ընդհանրապես չլինեն, բայց նայած՝ ինչպիսի թերություններ: Պատասխանատուները տարբեր առիթներով հավաստիացրել են, որ այս բնակարանների որակի վերահսկողությունն ավելի լավ է եղել, քան երկու տարի առաջ հանձնված 1056 բնակարաններինը: Կառուցող «Գլենդել հիլզ» շինարարական կազմակերպությունն էլ պարտավորվել է առաջիկա մեկ տարվա ընթացքում նկատված թերությունները վերացնել: Մնում է հավատալ, որ ամեն ինչ իսկապես այդպես էլ կլինի:

Այս շենքերի հանձնումով ավարտվեց երկրաշարժից անօթեւան ընտանիքների համար Գյումրիում պետական աջակցությամբ իրականացվող բնակարանաշինության ծրագրի երկրորդ փուլը, լրացուցիչ 400-ից ավելի բնակարաններ սկսել են կառուցվել եւ պետք է շահագործման հանձնվեն եկող տարի: Թե դրանով որքան կարելի կլինի լուծված համարել Գյումրիում երկրաշարժի հետեւանքով այսքան տարի անօթեւան մնացած ընտանիքների բնակարանային ապահովման խնդիրը, թերեւս հարկ է մեկ անգամ էլ ամենայն ուշադրությամբ ուսումնասիրել: Անօթեւանների խնդիրներով զբաղվող «Շիրակ կենտրոն» ՀԿ-ի դիտարկումներով, մասնավորապես, գյումրեցի ավելի քան 200 անօթեւան ընտանիքներ թեեւ երկրաշարժի հետեւանքով բնակարան են կորցրել եւ մինչեւ օրս պետության կողմից չեն փոխհատուցվել, սակայն սահմանված ժամկետում անօթեւանների հերթացուցակում չհաշվառվելու պատճառով դուրս են մնացել աղետի գոտում իրականացվող բնակբաշխման գործընթացից:

ԳԵՂԱՄ ՄԿՐՏՉՅԱՆ

# Երդվում ենք, Ուսուցչապե՛տ



**«Երդվում ենք, Ուսուցչապե՛տ, քո անունը կրող դպրության շեմից ներս մտնելուց առաջ ունկնդիր լինել դարերի կանչին, պահապանը դառնալ հայոց գիրուգրի: Այսօր մենք հայոց վերքի եւ արդար ընդվզումի մեծ երգչիդ եկել ենք ասելու, որ մենք նորածնվել ու ապրում ենք կրկին»: Ավանդույթի համաձայն՝ Մանկավարժական համալսարանի առաջին կուրսերի ուսանողները մեծ Լուսավորիչ Խաչատուր Աբովյանի Քանաքեռում գտնվող տունթանգարանում հենց այսպես են երդվում՝ հավատարիմ մնալ այն կոչմանը, որին կամովին են հավատարմագրվել:**

Այս տարի շուրջ 1000 ուսանող զինվորագրվեց այն մեծ բանակին, որի առաջին ուսուցիչը եղել է Մեսրոպ Մաշտոցը եւ որի վեհ գաղափարներով մեր նախնիները հանուն լուսավոր ապագայի պայքարել են խավարամտության դեմ:

Երդմնառության արարողությունը սկսվեց Տերունական աղոթքով, ապա Երեւանի պետական համալսարանի աստվածաբանական ֆակուլտետի դեկան, **Անուշավան եպիսկոպոս Ժամկոչյանը** ներկաներին փոխանցեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի օրհնանքը:

Դիմելով առաջին կուրսեցիներին՝ սրբազանը նրանց հորդորեց լինել հայ դպրության լավագույն մշակներն ու ժառանգները. «Դուք այսօր ուխտ պետք է անեք՝ դառնալով կրթության գործի մեր զինվորները: Երկրում թեւածող օտարածին հովերը փորձում են մեր ժառանգներին պոկել իրենց արմատներից: Այսօրվա մանկավարժն իր ուսերին ծանր խաչ է կրում. նա պետք է կրթի մի սերունդ, որը կկարողանա դիմակայել այդ քամիներին»:

Համալսարանի ռեկտոր **Ռուբեն Միրզախանյանը**, բարի երթ մաղթելով ուսանողներին, ասաց. «Մեր ժողովուրդը, հավերժացնելով Խաչատուր Աբովյանի հիշատակը, նրա անունով կոչեց բազում քաղաքներ, գյուղեր, կրթական հաստատություններ: Կարծում եմ՝ ամենամեծ խորհուրդը Հայկական պետական մանկավարժական համալսարանը մեծագույն մանկավարժի, մեծ լուսավորչի անունով կոչելն է: Սա եւս մեկ անգամ ընդգծում է, որ մեր համատեղ աշխատանքից է մեծապես կախված ազգային դպրոցի վաղը, ժողովրդի ապագան»:

Ապագա մանկավարժներին ողջունեցին եւ իրենց շնորհավորանքի խոսքը հղեցին նաեւ Դաշնային պետական գիտական հաստատության Ռուսական կրթական ակադեմիայի «Շտկողական մանկավարժության ինստիտուտ»-ի տնօրեն **Նիկոլայ Մալոֆեեւը**, Մանկավարժական համալսարանի երաժշտության ամբիոնի վարիչ **Արա Գեւորգյանը** եւ ուսանողական խորհրդի նախագահ **Վոլոդյա Գասպարյանը**:

Մանկավարժական համալսարանի օտարերկրյա գործընկեր Նիկոլայ Մալոֆեեւը իր ուրախությունը հայտնեց հայկական մշակույթի կենտրոններից մեկում լինելու եւ այս արարողությանը մասնակցելու համար: Ակադեմիկոսը վստահ է՝ հզոր Հայաստան ունենալու եւ վաղվա ապագան լուսավորելու համար մեծապես պատասխանատու է հենց այսօրվա մանկավարժը:

Երդմնառության արարողությանը հաջորդեց օրվա առթիվ կազմակերպված տոնական համերգը:

VIVACELL

# HTC Wildfire S սմարթֆոնն՝ այժմ ավելի շահավետ պայմաններով



ՎիվաՍել-ՄՏՍ ընկերության սպասարկման կենտրոններում առաջարկվող HTC Wildfire S սմարթֆոնն այժմ կարելի է ձեռք բերել նոր՝ 99000 դրամ գնով (նախկին 135000 դրամի փոխարեն):

Ավելին՝ հեռախոսը ՎիվաՍել-ՄՏՍ-ի սպասարկման կենտրոններից ձեռք բերելու դեպքում կարելի է մասնակցել «Սուպեր սմարթ բոնուս» ծրագրին եւ ստանալ բոնուս՝ հեռախոսի գնի 50 տոկոսի (49500 դրամի) չափով, որը կարելի է օգտագործել 6 ամսվա ընթացքում՝ ՎիվաՍել-ՄՏՍ-ի կողմից առաջարկվող հետեւյալ ծառայություններից օգտվելու համար. կատարել զանգեր, SMS եւ MMS հաղորդագրություններ ուղարկել ցանցի ներսում եւ ցանցից դուրս, օգտվել ինտերնետից, ակտիվացնել ինտերնետ-փաթեթ, կատարել միջազգային զանգեր, սակագնային պլանի փոփոխություն, ինչպես նաեւ օգտվել ռոումինգից:

Մանրամասն տեղեկություններ ստանալու համար կարելի է օգտվել www.vivacell.am կայքից, զանգահարել 111 անվճար հեռախոսահամարով, հաղորդակցվել մեզ հետ «111 օնլայն» պորտալի միջոցով, կամ այցելել մեր սպասարկման կենտրոններից որեւէ մեկը:

# ՕՐԱԿԱՐԳ

**2012թ. հոկտեմբերի 25-ին՝ ժամը 14:30-ին, ՀՀ ֆինանսների նախարարությունում (Մելիք-Ադամյան 1) կայանալիք վիճակախաղերի, շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորման հանձնաժողովի նիստի**

▼ «Ինտեր Լոտո» ՍՊԸ (ՎԽ-019 լիցենզիա) կողմից ներկայացված վիճակախաղի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին համաձայնություն տալու հարցի քննարկում:

▼ «Ինտեր Լոտո» ՍՊԸ (ՎԽ-019 լիցենզիա) կողմից ներկայացված վիճակախաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգերի փոփոխություններին համաձայնություն տալու հարցերի քննարկում:

▼ «Սենատոր կազինո» ՍՊԸ (ԽՏ-043 լիցենզիա) կողմից 15.10.2012թ. ներկայացված խաղատան շահումով խաղերի կազմակերպման եւ անցկացման կանոնակարգին համաձայնություն տալու հարցի քննարկում:

▼ «Բոնուս Մոնուս» ՍՊԸ (ՇԽ-249 լիցենզիա) եւ «Լառա եւ Արմինե» ՍՊԸ (ՇԽ-237 լիցենզիա) նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու հարցերի քննարկում:

ՀՀ ֆինանսների նախարարություն

## Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանը

**հայտարարում է մրցույթ պրոֆեսորադասախոսական անձնակազմի թափուր պաշտոնների համար**

**1. Ռոմանական լեզուների ամբիոն դասախոս (ֆրանսերեն լեզու) - 2**

**2. Անգլերեն լեզվի ուսուցման ամբիոն դասախոս (անգլերեն լեզու) -3**

Համապատասխան պաշտոնին, ըստ տարակարգերի, կարող են հավակնել.
դասախոս - մագիստրոսին համարժեք որակավորում ունեցող անձինք:

Նշված պաշտոնի համար անհրաժեշտ է ներկայացնել վերջին երեք տարիների ընթացքում լեզվի իմացության համաեվրոպական CEFR համակարգի C1/C2 մակարդակը հավաստող միջազգային չափորոշիչներին համապատասխան փաստաթուղթ՝ հետևյալ չափանիշների համաձայն.

Անգլերեն – TOEFL IBT – (94 և ավելի բարձր), TOEFL PBT – (560 և ավելի բարձր), IELTS – (7 և ավելի բարձր), BEC – (Higher), ICELT, Certificate of Proficiciency in English (CPE) – C2, Certificate in Advaced English (CAE) – C1 (որևէ մեկը):

Ֆրանսերեն – DALF - Diplome approfondi de langue Française:

**Ծանոթություն.**

Հավակնորդները համալսարանի կադրերի բաժին են ներկայացնում.

▼ դիմում ռեկտորին

▼ կադրերի հաշվառման անձնական թերթիկ,

▼ քաղվածք աշխատանքային գրքույկից,

▼ համառոտ ինքնակենսագրություն՝ ժամանակագրական տեսքով,

▼ բնութագիր վերջին աշխատավայրից,

▼ բարձրագույն կրթության դիպլոմի պատճենը,

▼ գիտական աստիճանը և գիտական կոչումը հաստատող փաստաթղթերի պատճենները (առկայության դեպքում),

▼ տպագրված գիտական և մեթոդական աշխատանքների ցուցակը,

▼ տվյալներ պարգևների, մրցանակների և պատվավոր կոչումների վերաբերյալ:

Փաստաթղթերի ներկայացման ժամկետը՝ 30 օր, սույն հայտարարության հրապարակման օրվանից:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել համալսարանի կադրերի բաժին:

Հասցեն՝ ք. Երևան, Խանջյան 5 , հեռ. 59 70 84:

ՌԵԿՏՈՐԱՏ

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60, 060 271112

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝ 19.10.2012, գինը՝ 100 դրամ, տպագրւում է «Տիգրան Մեծ» հրատարակչութեան տպարանում՝ Արշակունեաց 2: